

355. 4

Գ-99

Ս. ԳՈՒՐՈՎ

ՀՐԱՋԳԱՅԻՆ ԶՈԿԸ  
Մ Ա Ր Տ ՈՒ Մ



Մ Ա Ր Տ ՈՒ Ն Ա Կ Ա Ն  
1928

41.563

355.4

9-99

մ.

27 MAR 2013

11 MAR 2013

Ս. ԳՈՒՐՈՎ

ՀՐԱՉԳԱՅԻՆ ԶՈԿԸ  
ՄԱՐՏՈՒՄ

1003  
13277



ՀՐԱՏ. ՀԱՅԿ. ՀՐ. ԴԻՎԻԶԻՍՅՈՒ ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԲ. - ՀՐԱՏ. ՄԱՍԻ

1 9 2 8

ՄԱՐՏՈՒՆԱԿԱՆ





## ՋՈԿ ԷՆՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### ԻՆՉ Ե ՊԱՅԱՆՋՎՈՒՄ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Հետախուզությունն, ասում են, զորամասի աչքերն ու ախանջներն են: Այդ միանգամայն իրավացի է: Տեսնող մարդը շատ սակավ է սայթաքում, իսկ կույրը յուրաքանչյուր քայլ անում է, շոշափելով, և այնուամենայնիվ միշտ ել մի բանի դեմ է առնում:

Նույնն է պատահում պատերազմում: Յեթե առջևից ուղարկված է հետախուզություն, զորամասը գնում է համարձակ և առանց վախի: Իսկ վորեկ պատճառով թե վոր մոռացել են հետախուզության մասին, իմացիր, վոր մի անախորժություն կպատահի:

Բայց վորպեսզի հետախուզությունը լավ աշխատի, պետք է, ինչպես հարկն է, կարգի բերել այն, պետք է, վոր նա ինքը գործի ճիշտ և ամենից առաջ համարձակ ու վճռականորեն:

1914 թվի ոգոստոսին 4-րդ Ֆինլանդական զունդը հարձակվում էր Բյալա ավանի վրայով Իոհանիսթուրգ քաղաքի վրա: Առջևից ուղարկված էր 50 ձիավորից հեծյալ հետախուզություն, իսկ դրա յետևից գնում էր 64 հոգուց հետևակ հետախուզիչների խումբը: Հեծյալ հետախուզությունը, հասնելով Բյալա ավանը, հանդիպեց հրացանային-գնդացրային կրակի և յետ գնաց անտառի ծայրը, վոր գտնվում էր



Բյալայից 800—1000 քալլ դեպի արևմուտք: Մինչ այդ մոտեցավ հետևակ հետախուզությունը: Յերկու հետախուզությունները միացան և նորից փորձեցին առաջ շարժվելու, բայց կրկին նրանց կանգնեցրեց հակառակորդի կրակը: Այն ժամանակ հեծյալ ու հետևակ հետախուզությունների պետերը զեկուցեցին գնդի հրամանատարին, վոր Բյալա ավանը, ըստ յերևոյթին, գրավված է հակառակորդի խոշոր զորամասերով, այնպես վոր նրանք միասին չկարողացան առաջ շարժվել: Գնդի հրամանատարը, տեսնելով, վոր 114 հոգի վոչինչ չեն կարողանում անել, հրամայեց հրետանուն զուրս գալ դիրքն ու կրակ բացել Բյալա ավանի վրա: Իսկ առաջավոր գումարտակին հրամայված էր բացազատվել և հարձակում գործել: Բայց վորքան մեծ յեղավ բոլորի զարմանքը, յերբ հրետանական առաջին իսկ ձիգից հետո յերևաց, ինչպես Բյալայից դուրս յեկան ընդամենը միայն 15 գերմանական ձիավոր և ձանապարհով հանդիստ ուղևորվեցին դեպի Իոհանիսբուրգ:

Իսկ ինչ արդյունք ունեցան Յ-րդ Ֆինլանդական գնդի հետախուզյունների անվճռական գործողությունները:

Այն, վոր գունդը հապաղեց, բացազատվեց և ժամանակից վաղ ցույց տվեց իր ուժերը: Իսկ գերմանական 15 ձիավոր վոչ միայն կասեցրին գնդի առաջխաղացումը, այլև իմացան, վոր նա հրետանի ունի:

Իհարկե, հետախուզության մեջ միայն համարձակությունն ու վճռականությունը բավական չեն: Պետք է ունենալ նաև աչքաբացություն ու հնարա-

գիտություն: Վերցնենք թեկուզ 4-րդ Ֆինլանդական գնդի հետախուզության նույն դեպքը: Յեթե հեծյալ ու հետևակ հետախուզությունների պետերը գլխի ընկնեցին գործել այսպես, հետևակ հետախուզությունը հարձակում գործեր Բյալայի վրա արևմտյան կողմից, իսկ հեծյալ հետախուզությունը ավանի հյուսիսարևմտյան կողմում գտնվող թիւտաների միջով շքրջանցման դիմեր, հավանական է, վոր գերմանական շրջեկը կվախենար, վոր իրեն կկտրեն թիկունքից և յետ կգնար: Այն ժամանակ գնդին հարկ չեր լինի հապաղելու և հրետանին առաջ քաշելու, իսկ գերմանացիք վոչինչ չեցին իմանա:

Հետախուզությունը կարող է տեղեկություններ ստանալ հակառակորդի մասին վոչ միայն այն ժամանակ, յերբ նա տեսնում է նրան, այլ կարող է դատել նրա մասին վորոշ նշաններով նաև այն ժամանակ, յերբ հակառակորդ չկա այն շքջանում, վորտեղ գործում է հետախուզությունը:

Այսպես, որինակ՝ հակառակորդի մասին կարելի յե իմանալ տեղական բնակիչներից, հարկավոր է միայն հմտորեն մոտենալ այդ գործին: Յերբ բնակիչները դեպի մեզ բարյացակամ են տրամադրված, նրանք ճիշտ կասեն այն ամենը, ինչ գիտեն հակառակորդի մասին: Բայց յերբ տեղական բնակիչները դեպի մեզ թշնամաբար կամ կասկածանքով են վերաբերվում, այն ժամանակ հարկավոր է վորոշ հնարագիտություն ունենալ հակառակորդի մասին դատելու համար: Յեթե, որինակ՝ բնակիչները պատրաստակամություն են ցույց տալիս, աշխատում են սիրաշահել զորքերին, այդ նշանակում է, վոր մոտերքում զորքեր չկան: Ընդհակառակը, յեթե բնակիչները կոպիտ



են, մերժում են ամեն բանում, խոսալ չեն ցանկա-  
նում, նշանակում ե՛ հակառակորդը հետու չե, բնա-  
կիչները հույս ունեն նրանց պաշտպանութեան վրա՞,  
ուստի այդ շրջանում հարկավոր ե առանձնապես ըզ-  
գուշ լինել:

Հակառակորդի մասին կարելի յե դատել և այս-  
պիսի նշաններով. պատահում են ավերված կամուրջ-  
ներ, սատկած ձիեր, ջարդված սայլեր.—այդ նշանա-  
կում ե, վոր այդտեղից անցել ե հակառակորդի վոր-  
եե զորամաս: Յեթե գետինը տրորված ե հարթ կեր-  
պով,—նշանակում ե անցել ե հետևակը, յեթե ձիերի  
շատ հետքեր կան, ուրեմն անցել ե հեծելազոր, յեթե  
յերևում են լայն ու խոր ակոսներ, ուրեմն անցել ե  
հրետանին և այլն: Այս բոլորը հեշտութեամբ կարելի  
յե վորոշել, յեթե հետախույզը գիտելու ընդունակու-  
թյուն ունի:

Այդպիսով հետախուզութեանից պահանջվում ե՞  
համարձակութեան ու վճռականութեան, աչքաբացու-  
թյուն ու հնարագիտութեան և գիտելու ընդունակու-  
թյուն:

## ԻՆՉՊԵՍ ԿՈՂՄՈՐՈՇՎԵԼ\*) ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒ- ՆՈՒՄ

Հետախուզութեանում հաճախ հարկավոր ե լի-  
նում քայլել առանց ճանապարհների և անտառներով,  
վորտեղ հեշտութեամբ կարելի յե մոլորվել: Իսկ յերբ  
հետախուզութեանը մոլորվում ե, դրանից ավելի վատ

\*) Կողմորոշվել—նշանակում ե ամեն բոպե գիտենալ, թե վոր-  
տեղ ես գտնվում, վորտեղ ե հյուսիսը, հարավը, արևելքը և արև-  
մուտքը:

քան լինել չի կարող. այդպիսի դեպքում հետախուզու-  
թյունը վո՞չ միայն կարգին բան տալ չի կարող, այլև  
ինքն ել հեշտութեամբ կարող ե հակառակորդի ճան-  
կըն ընկնել: Կողմորոշվելու լավագույն միջոցը հետա-  
խուզութեանում կողմնացույցն ե: Կողմնացույցը մի  
կլոր տուփ ե, վորի ներսում կա մագնիսացրած պող-  
պատե սլաք, վորը պտտվում ե շատ բարակ մեխի վը-  
րա: Սլաքի մի ծայրը մուգ-կապույտ գույնի յե և  
ուղղված ե դեպի հյուսիս: Յեթե յերեսներս դարձնենք  
սլաքի մուգ-կապույտ ծայրի կողմը, առջևում կլինի  
հյուսիսը, յետևից՝ հարավը, աջից՝ արևելքը և ձախից՝  
արևմուտքը: Այժմ յեթե հետախույզը աշխարհի կող-  
մերով գիտե, թե վորտեղ ե հակառակորդը, և վորտեղ  
են իրենց զորքերը, նա յերբեք չի մոլորվի:

Բայց կողմնացույցը կարող ե կորչել, կարող ե  
փչանալ, կամ ամենևին չլինել: Դրա համար ել հետա-  
խույզը պետք ե գիտենա կողմորոշվելու և այլ միջոց-  
ներ: Կարելի յե, որինակ՝ աշխարհի կողմերը վորոշել  
ժամացույցով և արևով:


Այդ միջոցը հիմնված ե հետևյալ նկատառու-  
թեան վրա: Ժամերը նշող սլաքն իր շրջանը գործում  
ե 12 ժամվա ընթացքում, իսկ արևը յերկրի շուրջը  
գործում ե 24 ժամում<sup>1)</sup>: Ուրեմն ժամացույցի նշող  
յուրաքանչյուր ժամում արևն իր ճարապարհով անց-  
նում ե միայն կիս ժամվա չափ: Յեվ դրա համար ել  
վարվում են այսպես: Հարկավոր ե, որինակ՝ առա-  
վոտյան ժամի 6-ին իմանալ, թե վորտեղ ե հյուսիսը  
և վորտեղ՝ հարավը: Դեպի արև են դարձնում վո՞չ թե  
ժամացույցի վրայի 6 թիվը, այլ միայն 3-ը: Վորով-

<sup>1)</sup> Իհարկե, այս թվում ե այսպես, վորովհետև իրոք յերկիրն ե  
պտտվում արևի շուրջը:



հետև արևը հյուսիսից հեռացել է վոչ թե 8 ժամով, այլ միայն 3: Այն ժամանակ ժամացույցի 12 թիվը ցույց կտա հյուսիսը: Յեթե ժամի 15-ին (ցերեկվա ժամի 3-ին) հարկավոր է գտնել հյուսիսը, արևի կողմն են դարձնում  $7\frac{1}{2}$  թվանշանը և այն ժամանակ դարձյալ ժամացույցի 12 թվանշանը ցույց կտա հյուսիսը (տես նկար 1):


Գիշերն աշխարհի կողմերը վերջում են աստղերով: Գիշերը աստղերի մեջ վառ շոկնվում են յոթ ՆՅԱՐ 1



աստղ, վոր իրենց դասավորությամբ նման են կոթավոր թավայի: Այդ յոթ աստղերը կոչվում են Մեծ Արջի համաստեղություն (նկար 2): Յեթե աջ կողմի յերկու աստղը մտքով միացնենք ուղիղ գծով և այնուհետև այդ գիծը շարունակենք, այդ գծի շարունակություն վրա կհանդիպենք փոքրիկ, բայց փայլուն մի աստղի, վորը կոչվում է Բևեռային աստղ: Այդ աստղը գտնվում է մի ուրիշ փոքրիկ թավայի ձևի աստղերի կոթի ծայրին, այս փոքր համաստեղու-

թյունը կոչվում է Փոքր Արջ: Յեթե ուղիղ Բևեռային աստղով առաջ գնալու լինենք, ուղղությունը հենց կլինի դեպի հյուսիս: Վերջապես կարելի չէ կողմորոշվել և հետևյալ նշաններով: Առանձին ծառերի ճյուղերն ու տերևները խիտ են աճում հարավային կողմից: Ծառերի կեղևները ծածկվում են մամուռով հյուսիսային կողմից: Յեկեղեցիների սեղանները (բեմերը)

ՆՅԱՐ 2



շինվում են արևելքի կողմում: Մեջիդների մուտքը հարավից է: Մղոցած ծառերի կոճղերի վրա բնի շերտերն ավելի հաստ են հարավային, քան թե հյուսիսային կողմից: Չմեղը շենքերի տանիքներից կախած սառցե ձողիկներն ավելի շատ են հարավային կողմից:



**ԻՆՉՊԵՍ ԶՈՒԸ ՊԻՏԻ ԶԱՐԺՎԻ ՀԵՏԱԽՈՒ-  
ԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հետախուզութիւնում գլխավոր նշանակութիւնը պատկանում է Չոկի հրամանատարին: Նա վճռում է, թե ինչպես ավելի լավ է կատարել իր վրա զրած պարտականութիւնը, ինչ և ինչպես գննել, ինչպես վարվել հակառակորդին հանդիպելիս, յերբ և ինչի մասին զեկուցել: Նա յե պատասխանատու այն պետի առաջ, վորը նրան ուղարկել է:

Չոկի մյուս բոլոր հրացանաձիգները Չոկի հրամանատարի ոգնականներն են, լրատարները և պաշտպանութիւնը:

Հակառակորդի կողմից հանկուրծակի հարձակումից իրեն ապահովելու համար, Չոկն առջևից դետքեր է ուղարկում, յուրաքանչյուր դետքում նշանակելով յերկու-յերեք հրացանաձիգ: Չոկի մնացած հրացանաձիգները կազմում են հետախուզութեան միջուկը, վորը Չոկի հրամանատարի գլխավորութեամբ հետևում է դետքերին: Դետքերը շարժվում են կորիզից այնպիսի տարածութեան վրա, վորը հնարավորութիւն է տալիս տեսողական կապ պահելու: Միջին կտրտված տեղանքում այդ տարածութիւնը չպետք է ավելի լինի գործոն հրացանային կրակի հեռակայութիւնից, այսինքն 400 մետրից:

Յեթե տեղանքը բաց է, չորս կողմը լավ յերևում է, բավական է, վոր Չոկն ունենա առջևից մեկ դետք: Յերբ տեղանքը կտրտված է,—պատահում են, որինակ՝ թփեր, ձորեր, բարձունքներ, այն ժամանակ մեկ դետքի համար դժվար է գննել բոլոր ծածկարանները: Այդպիսի դեպքում ավելի լավ է ուղարկել յերկու

դետք: Վերջապես՝ միանգամայն փակ տեղանքում, ինչպես որինակ՝ անտառում, կամ վորտեղ շատ բարձունքներ ու ձորեր կան և այլն, հարկավոր կլինի Չոկից ուղարկել և յերեք դետք: Դետքերը պետք է շարժվեն այնպես, վոր տեսնեն իրար, այսինքն՝ մինչև 400 մետրի վրա:

Դետքում հրացանաձիգները կոչվում են դիտակալներ: Դիտակալներն ուղարկվում են յերկու-յերկու կամ յերեք-յերեք հոգի, վորպեսզի նրանցից մեկը կարողանա ամբողջ ժամանակ առաջ շարժվել, իսկ մյուսը հետևի կորիզին ու հարևան դետքին: Կամ որանակ յերկու դիտակալ գննում են թիւուրը, իսկ մյուսը դիտում է կորիզը և հետևում է, վոր հանկարծ մի վորևէ տեղից հակառակորդ դուրս չգա:


Յեթե դիտակալները քայլեն իրար հետ կողք-կողքի, հակառակորդը նրանց հեշտութեամբ կնկատի: Իսկ յեթե դրա հետ միասին ել հակառակորդը սխի նրանց գնդակոծել, այն ժամանակ նրանց հարվածելն ել դժվար չի լինի: Բայց դիտակալներն իրարից հեռու չեյ քայլել չեն կարող, վորովհետև շարունակ հարկ է լինում միմիանց հաղորդել իրենց դիտողութիւնները, խոսքը մեկ անել. թե ով ինչ պետք է գննի և այլն: Ամենից լավ է, վոր դիտակալները շարժվեն այնպիսի տարածութեան վրա, վորպեսզի նրանք վոչ միայն տեսնեն իրար, այլ և կարողանան ցածր ձայնով խոսել իրար հետ, իսկ այդ տարածութիւնը բաց տեղանքում կլինի 50 մետրից վոչ ավելի:

Դիտակալների դիտելու և շարժվելու համարութիւնից մեծ չափով կախված է հետախուզութեան հաջողութիւնը: Չոկի հրամանատարները ցույց են





7400 3



7400 4



տալիս յուրաքանչյուր դեաքին, թե դեպի վոր առար  
կաները նրանք պետք ե շարժվեն: Դեաքերը պետք ե  
խնամքով դնենն այդ տեղական առարկաները, յու-  
րաքանչյուր թուփը, յուրաքանչյուր բլրակը, յուրա-  
քանչյուր փոսը: Հակառակ դեպքում նրանք չեն կա-  
րող նկատել հակառակորդին և կանցնեն նրա կողքից-  
իսկ յերբ կմտենա կորիզը, հակառակորդը դուրս կգա  
իր թաքստոցից և վրա տալով, բոլորին կկոտորի:  
Ոգուտը քիչ ե, նույնպես յեթե դիտակալները հակա-  
ռակորդին նկատեն շատ մոտիկից, նրանք ուշքի գալ  
չեն կարող, յերբ հակառակորդի սվինները նրանց  
փորը կմտնեն: Դրա համար ել դեաքերը պետք ե շարժ-  
վեն այսպես. սկզբում ծածկարանից դիտել տեղան-  
քը, չկամ արդյոք վտանգավոր վոչինչ, չի՛ լսվում ար-  
դյոք վորևե տեղից ձայն կամ խոսակցություն, չեն  
յերևում արդյոք թփերի միջից մարդիկ: Յեթե չկան,  
ուրեմն նշանակում ե, վոր կարելի յե առաջ շարժվել  
մինչև հետևյալ ծածկարանը: Ծածկարանից դիտելն ել  
պետք ե կատարել հմտությամբ. անփորձ դիտակալը  
իր խելքով, լավ դիտելու համար, կանգնելով ամբողջ  
հասակով մեկ, վոչ միայն կմտնի իր ընկերներին,  
այլ և իրեն ել կարող են հեշտությամբ խփել: Փորձ-  
ված դիտակալը աննկատելիորեն կդիտի առջևում յե-  
ղած տեղանքը, կնշի առաջ շարժվելու իր ճանապարհը  
և հետագա կանգ առման տեղը և ապա կշարունակի  
ճանապարհը: —

Դեաքերի մի ծածկարանից դեպի մյուսը կատա-  
րած շարժման մեջ նույնպես պետք ե լինի ճարտա-  
բություն:

Յեթե տեղանքը չորս կողմից բաց ե հեռու տա-

րածությամբ, իսկ մինչև հակառակորդը դեռ ճանա-  
պարհ շատ կա, դեաքը պետք ե միայն քայլի արագ,  
դիտելով առջևն ու աջ ու ձախ կողմերը: Այն տե-  
ղանքում, վորտեղ բաց տեղերի հետ փոխեփոխ պա-  
տահում են ծածկարաններ, բաց տեղերը պետք ե ա-  
րագ անցնել, վազելով մինչև հետևյալ ծածկարանը,  
վորպեսզի հակառակորդի դիտողը չնկատի նրան:  
Բայց յեթե հաջորդ կանգառումը նշված ե թփերում  
կամ մացառուտներում, այդ դեպքում նրանց պետք  
ե մոտենալ զգուշությամբ: Պետք չե միանգամից վա-  
զել մտնել թփուտը կամ մացառուտը, թե չե հանկարծ  
կարելի յե հանդիպել հակառակորդին: Կտրտված տե-  
ղանքով, ինչպես որինակ՝ թփուտներով, առվով, ձո-  
րով, ավելի լավ ե շարժվել մի փոքր կուցած, կամ  
մինչև իսկ սողալով: Գիշերը մառախուղին, բքին, ա-  
մենևին չի կարելի վազելվազքի դիմել, այլ հարկավոր  
ե շարժվել քայլ առ քայլ, զգուշությամբ ու շոշափե-  
լով: Անտառում, պետք ե վազել մի ծառից դեպի  
մյուսը:

Այն ժամանակ, յերբ դեաքերը գննում են առ-  
ջևում գտնվող տեղանքը, ջոկի կորիզը մնում ե յետևի  
ծածկարանում և տեղեկություն ե սպասում դեաքերից  
այն մասին, թե կարելի՞ յե արդյոք առաջ շարժվել:

Յեթե դեաքերը հաղորդում են կորիզին, վոր  
վտանգավոր վոչինչ չկա և կարելի յե առաջ շարժվել,  
այն ժամանակ կորիզը, ինչպես դեաքերը, մասնատ-  
ված կարգով առաջ են շարժվում դեպի հետևյալ ծած-  
կարանը: Իսկ մինչ այդ դեաքերը վազում են դեպի  
նոր դիտակետը: Իսկ յեթե դեաքերը հաղորդում են,  
վոր առջևում նկատված ե ինչ-վոր կասկածելի բան,  
այն ժամանակ ջոկի հրամանատարն առաջ ե շարժ-



վում գեպի գետքերը, պարզում է պարագան և վորոշում է, թե ինչ անել:

Իսկ ինչպե՞ս ավելի լավ է հաղորդել կարգադրությունը կորիզից գետքերին, կամ տեղեկություններ գետքերից կորիզին:

Չայնով չի կարելի, վորովհետև հակառակորդը կարող է լսել: Լրատարների միջոցով նույնպես ամեն անգամ հարմար չէ, մի ավելորդ անգամ քեզ կհայտնաբերես, և փոխանցումն էլ դանդաղ կլինի: Այդ միջոցին հարկավոր է դիմել, բայց սակավ գեպքերում, յերբ հարկավոր է մանրամասնորեն բացատրել: Կորիզի ու գետքերի միջև կապի լավագույն միջոցը պայմանական նշաններն են:

Պայմանական նշանները կարող են լինել այսպես. «Նկատել եմ հակառակորդին» — բարձրացնում ես ձեռքը. «կարելի չէ շարժվել» — թափահարում ես ձեռքը շարժման ուղղությամբ. «կանգ առնել» — թափահարում ես ձեռքը գեպի ցած: Այս նշանները միանգամայն բավական են, իսկ յեթե պայմանական նշանները շատ լինեն, կարող են մոռացվել: Պայմանական նշանները հարկավոր է հաղորդել զգուշությամբ, կամ պռակած, կամ չոքած, և այնպես, վոր տեսնի նա, ում վերաբերում է այդ, իսկ հակառակորդը չնկատի:

### ԻՆՉՊԵՍ ԶՆՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Այն պետք, վոր ջրին ուղարկում է հետախուզության, կարող է հրամայել ջրկին զննել ձանապարհին հանդիպած տեղական առարկաները, ինչպես որինակ՝ գյուղը, ձորը, առվակը, ագարակը, — պարզելու համար, թե չկա արդյոք հակառակորդ: Այդ

տեղական առարկաները պետք է զննել հետևյալ կարգով:

**Գյուղը:** Ջրկին չեն հանձնարարում զննել մեծ գյուղ, վորովհետև այդ աշխատանքը ջրկի ուժերից վեր է: Նա գյուղում կկորչի և վոչինչ չի իմանա: Բայց ահա մի փոքրիկ գյուղ է 25—30 տնից, մանավանդ այնպիսի մի գյուղ, վորի տները ձգվում են յերկու շարքով: Ջրը կարող է զննել այսպիսի գյուղը: Բայց դրա հետ միասին պետք է հիշել, վոր իր ինդրի լուծման հետ միաժամանակ գյուղը զննելը չի նշանակում, թե պետք է մտնել յուրաքանչյուր մարդ և այնտեղ փնտրել հակառակորդին: Այդպիսի ինդրի համար, մինչև իսկ յեթե գյուղը փոքր է, ջրկը քիչ է, պետք է լինի դասակ կամ ավելի մեծ միավորություն, նայած գյուղի մեծության: Խնդրին համընթաց զննելու ժամանակ, ջրկը պետք է իմանա թե գյուղում հակառակորդ կա, թե վոչ հարց ու փորձ անելով տեղական բնակիչներին, կամ պետք է իմանա այն նշաններով, վորի մասին խոսվեց վերևում:

Գյուղին մոտենալ հարկավոր է զգուշությամբ, վորովհետև յեթե այնտեղ հակառակորդ կա, նա անպատճառ պահպանություն դրած կլինի, և հանկարծ կարելի չէ դեմ առնել նրան:

Ջրկի հրամանատարը պետք է ինքը դիտի ծածկարանից գյուղի ծայրը, և յեթե կասկածելի վոչինչ չկա, նշի մի վորևե ծածկարան գյուղին մոտիկ. թըփեր, առու, խոտի դեզ և այլն: Այդ ծածկարանին է անցնում ջրկը: Հարկավոր է աշխատել պատանդ բռնել. այդ կարելի չէ անել, կամ սպասելով, մինչև այդ գյուղի բնակիչներից մեկն ու մեկն անցնի ջրկի մոտից և բռնել նրան, կամ տեսնելով, թե արդյոք վորևե






մեկը չի աշխատում կարում. յեթե այդ ել չկա, այն ժամանակ 2—3 հրացանաձիգ ծածկված պետք է անցնեն մոտակա տունը և այնտեղից բերեն մի բնակիչ: Այս միջոցը մեծ մասամբ գործադրվում է գիշերով:

Բռնած բնակիչին հարկավոր է հարց ու փորձ անել, յեթե նա հասկանում է մեր լեզուն, յեթե վոչ նշաններով պարզել, թե նա չգիտե արդյոք վորե է բան հակառակորդի մասին, այնուհետև նրան թողնել իրենց հետ, իսկ մի քանի դեպքեր (սովորաբար կըհարկավորվի յերեք դեպք յերկու-յերկու հոգով) ուղարկել գյուղը գննելու: Կորիզը մնում է ծածկարանի յետևում. բայց այնպես, վոր կարողանա դիտել դեպքերին և յուրաքանչյուր բնակի ոգնել նրանց: Ինտքերը գյուղով անցնում են այսպես: Մի դեպք գնում է բանջարանոցների մի կողմով, մյուս դեպքը՝ մյուս կողմով, իսկ յերրորդը քայլում է գյուղի միջով (նրկար 5): Յեթե գյուղն ընկած է ջոկի ճանապարհին խոտորնակ, այն ժամանակ գյուղը գննվում է դիտակալների ամբողջ շղթայով:

Յերբ դեպքերն անցնում են գյուղը, նրանք այդ մասին նշան են տալիս կորիզին, յեթե հնարավոր է այդ, իսկ յեթե վոչ, դեպքերից մեկի դիտակալը գընում է գիկուցումով: Այն ժամանակ պատանդին բաց են թողնում, իսկ կորիզն արագ անցնում է գյուղը: Իսկ յեթե գյուղում հակառակորդ է լինում, ջոկը գաղտնի անցնում է գյուղի մոտով:

**Ձուր:** Յեթե ձորը յերկար է և ձգվում է դեպքի շարժման ուղղության աջ կամ ձախ կողմից, նրա հետադուռության համար նշանակվում է ինքնուրույն դեպք, վորը գնում է ձորի յերկայնքով: Յեթե ձորը հանդիպում են ջոկի ճանապարհին խոտորնակ, այն





ժամանակ նա հետազոտվում է դիտակալները շղթայով. այդ դեպքում կորիզը ձորն է իջնում միայն այն ժամանակ, յերբ դիտակալները դուրս են գալիս հակառակ ափը: Յեթե ձորի յերկայնքով պիտի անցնի ամբողջ ջուկը, նա անցնում է այս ձևով. դիտակալներից մեկը՝ ձորի մի լանջով, մյուսը՝ հատակով և յեթե ձորը բավական լայն է, յերրորդը ձորի հակառակ լանջով: Կորիզը պետք է քայլի ձորի լանջերից մեկով և վոչ թե հատակով, վորովհետև հակառակորդի հարձակման դեպքում նա շուտով չի կարող դուրս պրծնել ձորի հատակից և ստիպված կլինի մարտ մղել իր համար անշահավետ պայմաններում: Լանջով գնացող դիտակալները պետք է քայլեն այնպես, վոր դիտակալներից մեկը կարողանա տեսնել ձորի ափից ձորի այն կողմը, բայց վոչ թե ափով, իսկ մյուսը քայլում է լանջով:

**Պուրակ:** Մեծ անտառը, ինչպես և մեծ գյուղը չի կարող տրված լինել ջուկին հետազոտության համար: Իսկ յեթե ջուկը պետք է անցնի անտառով, նա անցնում է ճանապարհով, ունենալով մի դիտակալ առջևից և յերկու դիտակալ ճանապարհի կողքերից այնպիսի տարածությամբ, վորպեսզի թե դետքերը, թե կորիզը կարողանան իրար հետ տեսողական կապ պահել: Թե կորիզը և թե նրա առաջից քայլող դետքը պետք է գնան վոչ թե ճանապարհի մեջտեղով, այլ նրա յեզրերով, ծածկվելով ծառերի մեջ, վորովհետև ճանապարհի յերկայնքով նրանց դեմ սզգած հակառակորդի կրակը կարող է նրանց վոչընչացնել:

Փոքրիկ պուրակը (անտառակը) կարող է հետա-

զոտվել դիտակալների շղթայով այնպիսի հաշվով, վոր թեևային դիտակալները քայլեն պուրակի յեզրով: Կորիզը հետևում է դիտակալներին, աչքից չտալով նըրանց: Դիտակալներն ու կորիզն առաջ են շարժվում մի ծառից դեպի մյուսը: Առանձնապես զգուշ պետք է լինել պուրակի յեզրը մտնելիս, նախ՝ պետք է խընամքով գննել այն և ապա՝ մտնել:

**Ագարակ:** Յեթե ագարակի շուրջը ցանկապատ կա, պետք է ամբողջ ջուկն անց կացնել ցանկապատի մյուս կողմը: Մեկ-յերկու հրացանաձիգ պետք է թողնել դարպասի մոտ դիտելու համար, վորպեսզի հանկարծ հակառակորդը վրա չտա վորևե տեղից: Ներս մտնելով ագարակի դասավորության մեջ, ջուկի հրամանատարը կարգադրում է, թե ով ինչ պետք է դիտի: Անընակելի շենքերի համար նշանակում է մեկական կամ յերկուական հրացանաձիգ, իսկ ֆուսացածներով գննում է բնակելի շենքը: Նախ քան տուն մտնելը, հարկավոր է նրա լուսամուտների դիմաց հրացանաձիգներ դնել, այնպես վոր նրանք բաց չթողնեն յեթե մեկն ու մեկը կամենա փախչել լուսամուտից, և յեթե ջուկի հրամանատարին պետք կլինի ոգնություն, յերբ նա տուն մտած կլինի, նույն այդ հրացանաձիգները լուսամուտից կարող են նրան ոգնել: Ինքը հրամանատարը մեկ-յերկու հրացանաձիգներ է հետ տուն և մտնում և հետազոտում:

## ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՆԴԻՊԵԼԻՍ

Չի կարելի կարծել, վոր հակառակորդը նստած է մի տեղում և վոչինչ չի ձեռնարկում: Նա նույնպես



մեր կողմն ուղարկում է հետախուզությունն ու պահպանությունն: Ահա հենց հակառակորդի հետախուզությանն ու պահպանությանը ջոկը կարող է հանդիպել, և փոշ միայն հանդիպել, այլև նրա հետ մաքուր բռնըվել: Առանց մաքուր ամեն անգամ յոլա գնալ չի լինի, վորովհետև ներկայումս բոլոր բանակներում քողարկումն այնքան լավ է կիրառվում, վոր թերևս միայն գննելով, վոչինչ չհաջողվի խմանալ: Հարկ է լինում դիմելու այլ միջոցների. որինակ՝ գրավելու գերի, վորը կարող է արժեքավոր տեղեկություններ հաղորդել իրենց զորքերի մասին: Ինչպես այդ անել: Յեթե ջոկն անխտիր յուրաքանչյուր հակառակորդի հետ մաքուր բռնվի, իհարկե, դրանից շատ քիչ ոգուտ կստացվի:

Ջոկը շարժվում է մի դիտակետից դեպի մյուսը: Աջ թևի դետքը նկատել է, վոր իրենից դեպի աջ շարժվում է հակառակորդի մի խմբակ 4 հոգուց բաղկացած: Դետքը նշանով հայտնում է ջոկի հրամանատարին, վորն առաջ է քաշվում դեպի աջ թևի դետքը և գնահատում է պարագան այսպես. հակառակորդի թիվը քիչ է, ընդամենը միայն 4 հոգի: Նրան հաղթահարել կարելի է, բայց հակառակորդը 500 մետր տարածության վրա յե. տեղանքը՝ բաց: Յեթե այժմ նետվելու լինեն հակառակորդի վրա, յեթե նրան գնդակոծելու լինեն, ջոկը կրակոցներով կարող է իրեն հայտնաբերել: Ջոկի հրամանատարը վորոշում է, վոր ավելի լավ է ռաց թողնել այդ 4 հոգուն և պեկուցել նրանց մասին պետին, իսկ ջոկը թող ծածկված շարունակի ճանապարհը:

Ջոկը շարունակում է շարժումը. տեղանքը ծածկված է թփուտներով: Այժմ առաջավոր դետքը նկատ

տել է թփերի յետին 3 հոգու հակառակորդի և կանչել է ջոկի հրամանատարին: Ջոկի հրամանատարն, առաջ քաշվելով դեպի առաջավոր դետքը, տեսնում է, վոր հակառակորդը շարժվում է դեպի թփերը: Յեթե ջոկը սպասի թփուտներում, հակառակորդի խմբակը, չնկատելով ջոկին, կմտնի թփուտները, և նրան կարելի է բռնել առանց աղմուկի: Ջոկի հրամանատարը պայմանական նշանով իր մոտ է կանչում կորիզին և հրամայում. «Հակոբյանը, Պետրոսյանն ու Կարապետյանը պետք է կենդանի բռնեն կապրալին<sup>1)</sup>: Բարսեղյանն ու Տերտերյանը պետք է խոցեն այն բարձր հակառակորդին, իսկ Ջոհրայանը՝ յետևից քայլողին»: Հակառակորդի խմբակը թփուտներն է մտնում: Չորս կողմից հարձակվում են ջոկի հրացանածիգները մատնանշված անձերի վրա և կապրալը բռնված է: Ջոկի հրամանատարը խլում է նրա գեները, խուզարկում է նրան, վերցնում է բոլոր թղթերը և իսկույն ևեթ յերկու հրացանածիգների հետ միասին նրան նրա մոտ գտած թղթերի հետ ուղարկում է պետի մոտ:

Շարժումը շարունակվում է: Ճանապարհին աջ թևի դետքը նորից նկատում է հակառակորդի մի խմբակ՝ մոտ մի դասակ ուժով: Տեղանքը ջոկի շարժման ճանապարհից դեպի աջ բաց է, ձախից թփուտներ են, իսկ մի փոքր առաջ՝ ձորակ է: Ջոկի հրամանատարը վորոշում է. յետ կանչել աջ թևի դետքին և ամբողջ դետքով շարժվել թփուտներով դեպի ձորակը, վորտեղ սպասել, մինչև հակառակորդի խմբակը կանցնի: Դիտողությունը չի դադարում, քանի յե-

<sup>1)</sup> Կապրալ—տարերեկը բանակների մեծամասնության մեջ սրակի հրամանատարն է:



ընում է հակառակորդը: Պետին զեկուցելու հարկ չկա, վորովհետև ջոկից արդեն 3 հոգի գնացել են, յեթե մեկին ել ուղարկելու լինեն, կմնա ընդամենը 5 հոգի, և բացի դրանից, այդ առաջին հանդիպումը չե հակառակորդի հետ: Յերբ ջոկն առաջին անգամ հանդիպեց 4 հոգի հակառակորդի, նրանց մասին զեկուցված եր պետին, ուրեմն նախազգուշական միջոցներ թիկունքում արդեն ձեռնարկված են:

Հետագա շարժման ժամանակ ջոկը հանդիպում է հակառակորդի մի խմբակի, դարձյալ մի դասակի ուժով: Ջոկի հրամանատարը փորձում է աննկատելիորեն անցնել այդ խմբակի մոտից, բայց այդ նրան չի հաջողվում: Տեղանքը չափազանց բաց է: Այն ժամանակ ջոկի հրամանատարը հրամայում է հրացանաձիգներից յերկուսին անցնել ձախ կողմի փոքրիկ բլրակի վրա և այնտեղից կրակ բացել հակառակորդի վրա: Դրանով նա ուզում է հակառակորդի ուշադրութունը շեղել մի կողմի վրա, իսկ մինչ այդ անցնել նրա մոտից աջ կողմով: Բայց չհաջողվեց այդ ես: Հակառակորդի աջ ու ձախ կողմերից գնում են դետոքերը, վորոնք և հայտնաբերում են ջոկի շարժումը: Ջոկի հրամանատարը վորոշում է նահանջել, բայց այնպես, վոր թփի յետևից, յուրաքանչյուր բլրակից, ջոկը կանգ առնի կրակ բաց անելու համար:

Բացի հակառակորդից, ջոկն իր ճանապարհին կարող է հանդիպել և տեղական բնակչի, վորը հակառակորդի կողմից դեպի մեզ է գալիս: Հանդիպած յուրաքանչյուր բնակչին անհրաժեշտ է անապայման կանգնեցնել ու հարցաքննել, թե վորտեղից է նա գալիս և ինչ գիտե հակառակորդի մասին: Այսպիսի դեպքում դժվար է վորև է բան խորհուրդ տալ, թե

ինչպես պետք է իմանալ, թե արդյոք ճիշտ է խոսում, թե մի բան ծածկում է: Այստեղ հարկավոր է ջոկի հրամանատարի հատուկ «նրբազգացությունը», վորպեսզի նա կարողանա ճիշտը ստից ջոկել: Յեթե բնակչի խոսքերը կասկածների տեղիք չեն տալիս, նրան հարկավոր է բաց թողնել, բայց վոչ մի դեպքում դեպի հակառակորդի կողմը, այլ միայն դեպի իրենց գորքերը: Իսկ յեթե բնակչի վարմունքը կասկածելի չե թվում, նրան հարկավոր է հրացանաձիգներից մեկի հետ միասին ուղարկել մեր գորամառերից մեկը, վորն ամենից մոտիկ է գտնվում այն տեղին, վորտեղ հանդիպել են տեղական բնակչին:

### ԻՆՉՊԵՍ ՀԵՏԱԽՈՒՋԵԼ ՀԱՎԱՌԱՎՈՐԴԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ մասամբ հրաձգային ջոկը հետախույության կուղարկվի հարձակվող վաշտից: Վաշտի հրամանատարին կհետաքրքրեն այսպիսի հարցեր. ինչպես և վորտեղ են դաւավորված հակառակորդի կրակային կետերը. կան արդյոք չգնդակոծվող տարածություններ նրա դասավորության առջևում. կան արդյոք լարափակոցներ: Ջոկը պետք է պարզի հենց այդ հարցերը:

Նախ քան հակառակորդին կմոտենա այնպիսի տարածությամբ, վորտեղից կարելի կլինի, դիտել նրա դասավորությունը, ջոկը պետք է առաջ ներս սողոսկի նրա մարտական պահանուցությունից: Այդ հեշտ խնդրը չե: Ամենից առաջ հարկավոր է, ինչպես ասում են, «բախտը փորձել» և անցնել հակառակորդի պահանուցյունից աննկատելի ձևով: Դրա համար ջոկի հրամանատարը պետք է դիտողու-



Թյան համար հարմար մի վորևե կետից նայի, թե ինչպես են դասավորված հակառակորդի դիտողները և չկա արդյոք «ներս սողալու վորև ե անցք», վորով կարելի լինի գաղտնի անցնել պահպանության գծի մյուս կողմը: Սակավ ղեպքերում, բայց այդպիսի անցք կարող ե պատահել, ինչպես որինակ՝ առու, ցանած արտ, թփուտներ և այլն:

Յեթե այդպիսի հնարավորություն չկա, պետք ե փորձել «վերացնել» հակառակորդի դիտողներից մեկին, սովորաբար այնպիսին, վորին կարելի յե մոտենալ աննկատելի կերպով: Այդ արվում ե այսպես: Նշանակվում են յերկու-յերեք հրացանաձիգ, վորոնք զգուշությամբ սողալով մոտենում են աչքադրած դիտողին և միաժամանակ հարձակվում են նրա վրա, այնպես, վոր դիտողը չի կարողանում ձայն ու ծըպտուն հանել: Հրացանաձիգներից մեկը խլում ե դիտողի հրացանը, մյուսը փակում ե նրա բերանը, յեթե կա յերրորդ հրացանաձիգ, սա ոգնում ե յերկրորդ հրացանաձիգին թաշկինակը դիտողի բերանը խոթելու: Բացառիկ ղեպքերում, յերբ հակառակորդին չի կարելի կենդանի բռնել, հարկավոր ե նրան խոցելով սպանել: Յերբ այդպիսով անցք կազատվի հակառակորդի դիտողության գծի մեջ, ջոկը սողալով անցնում ե այդ անցքով: Յեթե չի հաջողվում այդ կս անել, հարկավոր ե նշել ամենից ծածկված ուղղությունը հակառակորդի դիտողների միջև, — ավելի լավ ե, յերբ արանքն ավելի մեծ ե, — և ապա ջոկել յերկու-յերեք հրացանաձիգ, վորպեսզի նրանք հակառակորդի մի կողմից, վորևե թփուտում, փոստում, առվում, սկսեն խոսակցել, թփերում շուռկ առաջացնեն, բայց այնպես վոր դիտողը լսի նրանց և ուշադրություն դարձնի: Մինչև նա կսկսի ականջ ղնել ու լավ դիտել այդ կող-

մը, ջոկի հրամանատարը մնացած հրացանաձիգներով արագ կանցնի նշած ուղղությամբ: Վերջապես՝ յեթե այս միջոցները չեն հաջողվի, այն ժամանակ ջոկը ստիպված պետք ե լինի կանոնավոր հարձակում գործել հակառակորդի պահպանության վրա և մոտենալ նրա պաշտպանության առաջին յեզրին: Իհարկի, այսպիսի ղեպքում ջոկը շատ բան չի պարզի, վորովհետև հակառակորդը, հավանաբար, նրան անմիջապես յետ կշարտի իր պահպանող զորամասերով, բայց և այնպես այդ հարձակումը, այն ել յեթե աջակցված ե հարձակվող վաշտի մարտական պահպանության կողմից, կպարզի հակառակորդի մարտական պահպանության խորությունը, կտեսնի, թե արդյոք կան լարափակոցներ, իսկ յեթե հակառակորդը կրակ բաց կանի պաշտպանության գլխավոր շերտից, կիմանա նաև նրա կրակի ուղղությունը:

Այն ղեպքում, յերբ ջոկին կհաջողվի աննկատելիորեն անցնել հակառակորդի պահպանության մյուս կողմը, ջոկի հրամանատարը մի հարձար գիտակետից զննում ե հակառակորդի կրակային կետերի դասավորությունը, լարափակոցների լայնությունը և ուղղությունը: Ճիշտ ե, քողարկման պատճառով, վորի միջոցով հակառակորդը թաքցնում ե իր դասավորությունը, դժվար ե վորևե բան տեսնել, բայց յերկար և ուշադիր նայելիս՝ հակառակորդն այսպես թե այնպես իրեն յերևան կհանի: Կամ մեկն ու մեկը կանցնի, կամ կշարժվեն, կհագան, կծխեն և այլն: Իսկ դրա համար ժամանակ ե պետք, և այն ել ամեն ինչ չես տեսնի: Չես տեսնի, որինակ՝ թե վորտեղ ե դրված գնդացիք, վորտեղ ե դասավորված հրաձգային բունը, վորտեղ ե ուժեղ գնդակոծվող ուղղու-



թյունը և այլն: Այդ դեպքում նորից պետք է դիմել մարտի: Նայում է ջոկի հրամանատարն ու տեսնում է, վար թփուտներում մի բան կա, բայց թե ինչ է, գծվար է ասել: Այն ժամանակ նա յերկու-յերեք հըրացանաձգի հրամայում է սողալով հեռանալ մի կողմի վրա և այնտեղից կրակ բացել թփուտների դեմ, իսկ ինքը մնաւ է և դիտում: Յերեք հրացանաձգի կրակը վտարի յե հանում հակառակորդին: Թփուտներէ յետեից կրակում են հրացաններից. իսկ ձախից.—սրահի անկյունից,—գլուխը կորցրած նշանառուն կտկտացրեց գնդացիքը: Ճիշտ է, գնդացիքը շուտով լուեց, վորովհետև նշանառովին մի լավ հանդիմանեցին, վոր նա կրակում է «քոռեքոռ», բայց ջոկի հրամանատարին հենց այդ էլ պետք եր: Նա իմացավ, թե վորտեղ է գրված գնդացիքը, վորտեղ են դասավորված հրացանաձիգները, և գուցե նրա բախտից մի բան էլ հայտնաբերեց: Առաջին հայացքից այդ խնդիրըն անիրագործելի յե, վորովհետև չէ՞ վոր ջոկի յետևում մնացել է հակառակորդի պահպանությունը, վորը, լսելով հրացանաձգությունը, կաշխատի իսկույն և յեթ բռնել քաջերին: Բայց բանն այն է, վոր հետախուզող ջոկի յետեից այնքան էլ հեռու չե մարտական պահպանությունը, իսկ սրա յետեից նաև հարձակվող դասակները, վորոնք շուտով կսկսեն նեղել հակառակորդի պահպանությանը: Ճակատից ու թիկունքից բացած հրացանաձգության ժամանակ հակառակորդն այլևս վոչ մի միջոց չի ունենա վորոնելու պատճառը, թե ով և ինչու կրակեց թիկունքում, նա կաշխատի ինչքան կարելի յե շուտ հասնել յուրայիններին:

## ՅԵՐԲ ՅԵԿ ԻՆՉՊԵՍ ԶԵԿՈՒՅԵԼ

Այն բոլոր տեղեկությունները, վոր կիմանա հետախուզական ջոկը, արժեքավոր կլինեն միայն այն դեպքում, յերբ հետախուզությունն ուղարկող պետի ձեռքը կընկնեն ժամանակին: Ինչ ոգուտ, որինակ՝ նրանից, վոր վաշտի հրամանատարը հարձակման ժամանակ հետախուզությունից տեղեկություններ կստանա այն մասին, թե վորտեղ և ինչպես են դասավորվել հակառակորդի կրակային կետերը, յերբ արդեն դասակները գրոհի յեն անցել: Դրանից գործը չի փոխվի, այլևս հնարավոր չի լինի վոչ վերադարձնել դասակներին և վոչ փոխել նրանց ուղղությունը: Ուրեմն, հարկավոր է գեկուցագիրն ուղարկել պետին այնպիսի հաշվով, վոր նա կարողանա ոգտագործել տեղեկություններն իր վրա գրած խնդիրը լուծելիս:

Զեկուցագրերը լինում են ժամկետավոր և անժամկետ:

Ժամկետավոր են կոչվում այնպիսի գեկուցագրեր, վոր ջոկի հրամանատարն ուղարկում է պետի նշանակած ժամկետներին: Որինակ՝ պետը կարող է հրամայել, ժամի 12-ին և ժամի 16-ին, կամ յերբ կանցնեն Իվանովկա գյուղը, կամ, զիցուկ, Իրա գետը: Առաջին դեպքում ջոկի հրամանատարը գեկուցագիրը պետք է ուղարկի այնպիսի հաշվով, վոր պետը ստանա ժամի 12-ին կամ 16-ին: Դրա համար պետք է իմանալ, թե լրատարն ինչքան ձանապարհ պետք է անցնի գեկուցագիրն ուղարկած տեղից մինչև պետին հասնելը: Ընդունենք, վոր այդ տարածությունը հավասար է 3 կիլոմետրի: Այնուհետև ընդունենք, վոր այդ տարածությունը նա կանցնի մի ժամում: Ուրե-



մըն, վորպեսզի զեկուցագիրը պետի ձեռքն ընկնի ժամի 12-ին, հարկավոր ե ուղարկել ժամի 11-ին:

Յերկրորդ զեպքում, յերբ հրամայված ե զեկուցել գյուղը կամ գետն անցնելուց հետո, վոչ մի հաշիվ չի պահանջվում: Հենց վոր ջոկն անցնում ե հիշյալ կետը, հարկավոր ե ուղարկել զեկուցագիրը, մատնանշելով, թե ինչքան ժամանակում են անցել այդ գետը:

Անժամկետ զեկուցագրերը նրանք են, յերբ ջոկի հրամանատարը պետք ե զեկուցի պետին, թեկուզ և վերջինս այդ մասին պատվեր չի տվել: Դրանք պարտադիր զեկուցագրեր են և ուղարկվում են հետևյալ զեպքերում.

- 1) Հետախուզության զուրս գալիս:
- 2) Հակառակորդի հետևակի առաջին հանդիպման ժամանակ:
- 3) Յուրայինների, բայց վոչ իր զորամասի զորքերի հանդիպման ժամանակ:
- 4) Հակառակորդի բաց թև գտնելու ժամանակ:
- 5) Մեր կամ հարևան զորամասի վրա հակառակորդի կողմից պատրաստվող հանկարծակի հարձակման մասին:
- 6) Յերբ գրավված չե այն կետը, վորտեղ յինթադրվում եր հակառակորդը:
- 7) Հետախուզությունն ավարտելուց հետո:

Կարելի չե կարծել, վոր յեթե ուղարկվեն այս բոլոր զեկուցագրերը, այն ժամանակ լրատարներն ել չեն բավականացնի: Ինչպիսիք, յեթե վերոհիշյալ բոլորը պատահի, լրատար չի մնա: Այն ժամանակ հարկավոր ե վճռել, թե յերբ ուղարկել, իսկ յերբ վոչ: Բայց ամեն անգամ այդ բոլորը միասին չեն պատահում: Ա-

մենից հաճախ ջոկի հրամանատարին հարկ ե լինում զեկուցել միայն հետախուզության յեղնելու մասին, և այդ լրատարն իսկույն վերադառնում ե, հակառակորդի առաջին հանդիպման մասին և հետախուզությունն ավարտելուց հետո:

Ձեկուցումները լինում են բանավոր և գրավոր: Ավելի լավ ե ուղարկել գրավոր զեկուցագրեր, վորովհետև բանավորը լրատարը կարող ե շփոթել: Յերբ ժամանակ չկա, կամ չկա թուղթ ու մատիտ, վոր շատ սակավ ե պատահում, վորպես բացառություն, կարելի չե ուղարկել և բանավոր զեկուցագրեր:

Ձեկուցագրերը պետք ե գրել հմտությամբ: Ամենից առաջ զեկուցագիրը պետք ե ճիշտ լինի: Սխալ զեկուցագիրը վոչ միայն ոգուտ չի բերի, այլ և կարող ե մեծ վնաս հասցնել: Ուստի ջոկի հրամանատարը յեթե վորև ե բանում համոզված չե, լավ կանի դրա մասին չգրի, վամ յեթե գրում ե, պետք ե հիշատակի, վոր դրանում համոզված չե: Բացի դրանից զեկուցագրում պետք ե հիշատակել, թե ինչ միջոցներով են ձեռք բերված տեղեկությունները: Յեթե, որինակ՝ վորև ե բան տեսել ե ինքը ջոկի հրամանատարը, պետք ե այդպես ել գրել, վոր տեսել ե անձամբ. այդ զեկուցագրին պետն անպայման կհավատա: Յեթե ուղարկվում են այնպիսի տեղեկություններ, վոր դիտակալներից են ստացվել, բայց վորևե պատճառով ջոկի հրամանատարն ինքը համոզված չե, զեկուցագրում հարկավոր ե հիշատակել, վոր տեղեկությունները ստացվել են ուղարկված դիտակալներից: Վերջապես՝ կարող են լինել տեղական բնակիչներից ստացած տեղեկություններ: Այդ տեղեկություններին պետն իրավունք ունի կասկածանքով



վերաբերվել և կաշխատի, իհարկե, ստուգել մի վորևե այլ միջոցով:

Չեկուցագրում հարկավոր է մատնանշել, յերբ և վորտեղ է նկատված հակառակորդը, վորքան է նա, զորքերի վճր տեսակից (հետևակ, հեծելազոր, հրետանի), կամ զորքերի ինչ տեսակներից բաղկացած մի ջոկատ, ինչ է անում, կամ ինչ է մտադիր անելու հակառակորդը: Բացի զրանից զեկուցագրում հարկավոր է մատնանշել, թե ինչ է մտադիր հետագայում անել ջոկի հրամանատարը, քնում է տեղում, թե առաջ է շարժվում այս-ինչ տեղը:

Չեկուցագիրը պետք է վորքան կարելի յ է կարճ լինի, վոչ մի ավելորդ խոսք, ինչպես որ ինակ՝ «զեկուցում եմ, կամ ձեր ուղարկած հետախուզությունը» և այլն չպետք է գրել: Բայց անպայման պետք է հիշատակել.

- 1) Ում է հասցեյագրված զեկուցագիրը:
  - 2) Յերբ և գրված, այսինքն՝ տարի, ամսաթիվ, ժամեր ու րոպեներ:
  - 3) Վորտեղից է ուղարկված զեկուցագիրը:
  - 4) Ինչ քարտեզով է ոգտվել ջոկի հրամանատարը, յեթե քարտեզ ունեցել է զեկուցագիրը գրելիս:
  - 5) Ջոկի հրամանատարի ստորագրությունը:
- Մտաավորապես զեկուցագիրը պետք է գրված ինի այսպես.

5-րդ վաշտի հրամանատարին.

1927 թվի, ոգոստոսի 26-ին, ժամի 16-ից անց 5 րոպե (ժամն ու րոպեները գրվում են այն ժամանակ, յերբ արդեն զեկուցագիրը ստորագրված է).

Բարձունք 124,8, վոր գտնվում է 500 մետր դեպի արևմուտք Իվանովկա գյուղից:

Քարտեզը 2 վերստ 1 մատնաչափում:

**Ս.ՃԱՄԲ ԵՍԱ ԿԱՐԳԵԼ ԵՄ.** հակառակորդը գրավում է Իվանովկա գյուղը, խրամատներ է փորում գյուղի արևմտյան ծայրամասում: Տեղական բնակիչներին ասելով, հակառակորդը Իվանովկան գրավել է ոգոստոսի 26-ին ժամի 10-ին: Հակառակորդի ուժերն են մոտ մի գումարտակ հրետանիով: ԻՄ ուղարկած գիսակարճերը պարզել են, վոր Իվանովկա գյուղից  $1/2$  կիլոմետր հարավ գտնվող պուրակը գրավված չէ հակառակորդի կողմից:—Մնում եմ 124,8 բարձունքի վրա և շարունակում եմ դիտել հակառակորդին:

Ջոկի հրամանատար՝ Վահանյան

## ՉՈԿԸ ԴԵՏՔՈՒՄ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՉՈՒ ՅԵ ՀԱՐԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՎԵԼ ՅԵՐԹՈՒՄ

Յերբ զորամասը գնում է յերթով, նա բացի հետախուզությունից ուղարկում է նաև յերթական պահպանություն: Հարց է ծագում, թե պետք է արդյոք պահպանություն ել ուղարկել, յերբ առջևում կա արդեն հետախուզություն:

Հետախուզությունը զորամասի աչքերն ու ականջներն է, իսկ յերթական պահպանությունը՝ ձեռքերը: Յերբ մարդ մտնում է մութ և իր համար անծանոթ սենյակ, նա ձեռքերն առաջ է մեկնում, վորպեսզի մի բանի դեմ չառնի: Այդպես էլ զորամասը: Շարժվելով ճանապարհով, նա դուրս է բերում առջևից ու կողքերից իր ձեռքերը—պահպանությունը: Յեթե այդ պահպանությունը կա, դժվար թե յերբևե հակառակորդը հարձակվի նրա վրա հանկարծակի: Իսկ առանց վորևե պահպանության շարժումը միշտ էլ մի փորձանք է բերում:

**Յիրթական պահպանությունն ամենից առաջ**



պահպանում ե իր գործմասը հակառակորդի հանկարծակի հարձակումից:

Իմպերիալիստական պատերազմի սկզբներում ուսուսական մի հեծյալ ջոկատ տեղավորված էր Տոմաշով քաղաքի մոտ: Ուղարկված էյին մի քանի հեծելավաշտեր՝ հակառակորդի մասին տեղեկություններ հավաքելու համար: Այդ հեծելավաշտերից մեկը, — Նովո-Միրգորոդյան ուլանների 16-րդ գնդի 2-րդ հեծելավաշտը գնում էր Բելժեց ավանի — ժուկով-Յեխանով ուղղությամբ: Հեծելավաշտի կողքերից գնում էյին 3 դեռք պահպանություն համար: 3—4 կիրոմետր ժուկով գյուղին չհասած, հեծելավաշտի հրամանատարը զեկուցագիր է ստանում ձախ դեռքից, վոր ճանապարհից 1 կիրոմետր ձախ, բլրակի յետևում թագնվել է ավստրիական հեծելավաշտը՝ պատրաստ հեծյալ շարքով գրոհի անցնելու:

2-րդ հեծելավաշտի հրամանատարը, իմանալով վտանգի մասին, ինքը պատրաստվեց մարտի և վորպեսզի նախաձեռնությունը հակառակորդի ձեռքը չտա, վորոշեց ինքն առաջինը գրոհի նրան: Ավստրիացիները, նկատելով ուսուսական հեծելավաշտի շարժումը, նույնպես դուրս յեկան դեմ առ դեմ և մի յերկու բուպյեց հետո հեծելավաշտերն իրար խառնվեցին: Ըսկսվեց սոսկալի կոտորածը: Բռնամարտից հետո ավստրիական հեծելավաշտից մնաց միայն 10 դրագուն: Մնացածները հրամկաղմի գլխավորությունը ընկան մարտում: Նովո-Միրգորոդյան գնդի 2-րդ հեծելավաշտի կորուստներն էյին 7 հոգի: Այդպիսով շնորհիվ ձախ թևի դեռքի աչալըջություն՝ 2-րդ հեծելավաշտը վոչ միայն խուսափեց ավստրիացիների հանկարծակի

հարձակումից, այլ և ինքը ջախջախեց հակառակորդին:

Ֆերական պահպանությունը բաժնում է ժամանակ, վոր անհրաժեշտ է, վորպեսզի պահպանվող գործմասը մարտակարգի անցնի եվ ապահովում է գործմասը հակառակորդի հասոցայից կամ ձեռքի գեղացիների կրակից (նայած պահպանվող դրամասի մեծություն):

1915 թվի նոյեմբերի 31-ին 5-րդ Որենբուրգի կազակների գունդը ծածկում էր հեծյալ ջոկատի ձախ թևը: Այդ ջոկատը հակառակորդի հետախուզություն էր կատարում Վիլենբերգ քաղաքի մոտ:

Կազակները տեղավորվեցին անտառի ծայրին: Ժամի 10-ից անց անտառի ծայրին նկատված էր զերմանացիների մի դրոասյուն: Նա շարժվում էր խճուղիով դեպի Վիլենբուրգ անտառից 900—1000 քայլ հեռու: Զորասյունի առջևից քայլում էր միայն մի պահպանող դասակ: Կազակների գնդի հրամանատարը հրամայեց յերկու հարյուրյակի և յերկու գնդացրի կրակ բանալ զերմանական զորասյունի դեմ: Կրակն այնչափ դիպուկ էր և ուժեղ, վոր հինգ վայրկյանից հետո զերմանացիների զորասյունը մարմինների կույտի վերածվեց: Հետո պարզվեց, վոր զերմանացիները 2 վաշտ էյին, մնացել էյին միայն 25 հոգի, սպանված էր 216 զինվոր և 2 սպա: Որենբուրգյան գնդից սպանված էր միայն մի կազակ ու մի ձի: Ահա թե ինչ է նշանակում չունենալ թևերի պահպանություն: Գերմանացիները պեռք է ունենային բացի առաջավոր պահպանությունից, նաև աջ թևի պահպանություն: Այդ պահպանությունը կշարժվեր անտառի



ծայրով և, իհարկե, կնկատեր կազակներին: Մարտ տեղի կունենար, և դեռ հայտնի չէ, թե ինչով կվերջանար:

**Յերթական պահպանությունը** օպայալում է հակառակորդի մահը զորամասերին և այդպիսով իսկ ձանապարհ է բացում պահպանվող զորամասի համար, իսկ հակառակորդի հետախուզությունը թույլ չի տալիս տեսնելու պահպանվող զորամասի յերթակառգը, ծածկելով այդ զորամասի կազմն ու նրա մեծությունը:

**Հակառակորդի խոռոչ զորամասերի հետ** յերթական պահպանությունը մարտի յե բռնվում, հետախուզելով ցրաց ուժերն ու խմբավորումները: Գրավում էլ յեվ իր ձեռնում պահում պահպանվող զորամասի մարտի համար կարեվոր կետերն ու բնագծերը:

Այդպիսով, ինչպես տեսանք, բացի հետախուզությունից անհրաժեշտ է ունենալ նաև յերթական պահպանություն: Շատ անախորժություններ են պատահում, յերբ պահպանությունը բացակայում է:

### ԻՆՉՊԵՍ ԶՈՎԸ ՊԻՏԻ ՇԱՐԺՎԻ ԴԵՏԲՈՒՄ


Ինչպես և հետախուզությունում, ջոկը դեռ ընդում պետք է պահպանի և իրեն: Զոկի պահպանությունն են հանդիսանում դիտակալները, վորոնք ուղարկվում են ջոկից այնպիսի տարածությունում, վորպեսզի կարելի լինի նրանց ոգնել գործոն հրացանային կրակով: Հարթ տեղանքում այդ կլինի մինչև 400 մետր: Թե քանի դիտակալ պետք է ուղարկել, այդ կախված կլինի այն տեղանքից, վորով պետք է շարժվի ջոկը, և նրանից, թե վորչափ մեծ է վտանգը հակառակորդի կողմից: Բաց տեղանքում կարելի յե ուղարկել դիտակալների մի խմբակ 2-3 հոգուց: Յեթե հարկավոր է

«ասանք» (զննել) լայն շերտ կամ խիստ ծածկված տեղանք (անտառ, թփուտ, ձոր), կամ վերջապես՝ մեծ զգուշութուն և պահանջվում, հարկավոր է ուղարկել դիտակալների յերկու, յերբեմն և յերեք խմբակ: Այն ժամանակ դեռքի կորիզում ջոկի հրամանատարի հետ միասին կմնա 5-3 հոգի: Դիտակալների խմբակները, ինչպես և հետախուզությունում, շարժվում են իրարից այնպիսի հեռավորությունում, վոր նրանց մեջ տեսողական կապ լինի: Հարթ տեղանքում և ցերեկով այդ տարածությունը կլինի մինչև 400 մետր: Կտրատած կամ փակ տեղանքում, գիշերով, մառախուղին կամ բքին դիտակալների խմբակների միջև տարածությունը պետք է փոքրանա, դարձյալ այնչափ, վոր իրար մեջ տեսողական կապ լինի:

Առաջավոր դեռք նշանակված ջոկն իրենից ուղարկում է դեպի առաջ դիտակալների մեկ կամ յերկու խմբակ: Դիտակալները կարող են քայլել կամ իրար յետևից, կամ մի գծի վրա: Զոկի հրամանատարի հետ մնացած հրացանաձիգները կազմում են կորիզը: Կորիզը շարժվում է այնպիսի շարքով, վորն ամենից շատ է հարմարում տեղանքին, մի-մի հոգի զորասյունով կամ ոճաշարով: Կողմնադեռք նշանակված ջոկը կուղարկի առջևից դիտակալների մի խմբակ և վտանգավոր (բաց) թևի կողմը՝ 3 դիտակալից մի խմբակ: Առջևի ու կողքի դիտակալների խմբակների միջև պետք է տեսողական կապ լինի: (Տես նկար 6):

Թիկունքային դեռքում ջոկը կարող է ուղարկել դիտակալների մեկ յերկու խմբակ, յեթե պահպանող մասը հարձակվում է: Իսկ յեթե նա նահանջում է, այն դեպքում յերկու-յերեք խմբակից պակաս ուղարկել չի կարելի: Վերջապես՝ յերբ շարժվում են գիշերով, մառախուղին, անտառում և ընդհանրապես խիստ





ՀԱԿԱՂԱԿՈՐ

ԴԻՏԱԿԱՆՆԵՐ

ԿՈՐԵՉ

ՆԵՍԻՐ 6

կտրատված տեղանքով, ջուկի շարժման կարգը կլինի այսպես. առաջավոր ու թիկունքային դետրում՝ շղթա. իսկ կողագետքում՝ մի-մի հոգով զորասյուն կամ ուձաշար:

Բոլոր դեպքերում ջուկը չպետք է հեռանա պահպանվող զորամասից գործոն հրացանային կրակի հեռակալութունից, այսինքն՝ 400—500 մետրից ավելի, վորպեսզի նրան կարելի լինի ոգնել հրացանային կրակով ուղեկալից: Գիշերով, մատախուղին կամ անտառում այդ հեռակալութունը կըճատվում է մինչև 100—150 մետրի:

Դետքում գտնվող ջուկի շարժումը յերթում կատարվում է նույնպես, ինչպես հետախուզութունում, — մի դիտակետից զեպի մյուսը, նկատի ունենալով տեղանքի ու ժամանակի բոլոր առանձնահատկութունները (տես «Ինչպես ջուկը պետք է շարժվի հետախուզութունում» գլուխը):

### ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՏԲՈՒՄ

Հետախուզութունում մենք ասացինք, վոր ջուկը հակառակորդին հանդիպելիս կարող է մարտի բռնվել նրա հետ, կարող է և չբռնվել: Դետքում գտնվող ջուկը յերթում իր խնդիրը կատարում է միայն մարտի միջոցով: Առաջավոր դետքով հակառակորդի հետ ընդհարվելիս ջուկը բացազատվում է մարտակարգի, ձրգտում է տաղալի նրան և հետապնդել կրակով ու շարժումով: Յերբ հակառակորդն ավելի ուժեղ է լինում, ջուկը գրավում է մի շահավետ կետ կրակ վարելու և դիտողության համար և աշխատում է այդ կետը պահել իր ձեռքում մինչև կժոտենա յետևից շարժվող զորամասը: Թիկունքային ու կողմնադետքում (թևային



շարժման ժամանակ) ջուրը, կովի բռնվելով, պետք է հիշի, վոր նրա խնդիրն է կտրվել հակառակորդից և հասնել նշված կետին: Ուստի նա կասեցնում է հակառակորդին միայն այնքան ժամանակ, վոր պահպանվող զորամասը գուրս գա հակառակորդի գնդացիները կրակի տակից և իսկույն և յեթ աշխատում է կտրվել հակառակորդից և հասնել իր զորամասին: Ճանապարհին հանդիպած տեղական առարկաները ջուրը գննում է այնպես, ինչպես հետախուզութիւնում: Տեղական բնակիչներին բռնում են և հարցաքննելուց հետո (թե արդյոք դարան մտած հակառակորդ չկա) ուղարկում են ուղեկալի պետին:

Մեծ ու փոքր դադարքների կանգառումները ժամանակ թե դիտակալները և թե կորիզը տեղավորվում են ծածկված. դիտակալները շարունակում են դիտել շրջակա տեղանքը:

Յերբ պահպանվող զորամասը (ուղեկալը) հասնում է վերջնական կետին, ջուրը կանգ է առնում նույն կարգով, ինչ կարգով շարժվում եր և դիտում է հակառակորդի կողմն այնքան ժամանակ, մինչև վոր պատվեր կատանա ուղեկալի պետից՝ թողնել իր տեղը և մեկնել հավաքակայանը:

## ՋՈՎԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՋ

### ԻՆՉ Ե ԶՈՎԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՋ

Անգլիական մի ռազմական գրող պատերազմը համեմատում է՝ մթության մեջ տեղի ունեցող յերկու հոգու մենամարտի հետ: Տեսնենք, թե ինչպես է նա մեկնաբանում այդ մենամարտը:

Ամենից առաջ, —ասում է այդ հեղինակը, —մը-

Մության մեջ հարկավոր է գտնել իր թշնամուն: Դրա համար հարկավոր է ձեռքը մեկնել հակառակորդին շոշափելու և իրեն հարձակումից պաշտպանելու համար:

Այդ հետախուզութիւնն ու պահպանութիւնն է:

Այնուհետև, յերբ հակառակորդը գտնված է, հարկավոր է շոշափել նրա թույլ կողմը, յենթադրենք, բուզը: Այդ հետախուզութիւնն շարունակութիւնն է հակառակորդի հետ շփման միջոցով: Յերբ թույլ կողմը (բուզը) գտնված է, հարկավոր է ամուր պահել նրան (հակառակորդին), վորպեսզի նա վորև է կերպ գուրս չպրծնի, և ինքը հարված չհասցնի: Այդ հակառակորդին կրակով կաշկանդելն է: Վերջապես մյուս ձեռքով հարկավոր է թշնամուն վճռական հարված հասցնել, վորպեսզի նրան հանեն շարքից: Այդ էլ սվինով հարվածն է:

Յեթե խորը քննելու լինենք այս դատողութիւնները, կտեսնենք, վոր պատերազմում իրոք այդպես էլ լինում է, միայն, իհարկե, խոշոր չափերով: Սկզբում ուղարկվում է հետախուզութիւնն ու պահպանութիւնը: Յերբ հակառակորդին գտել են, հարձակում են գործում նրա վրա, շարունակելով հետախուզութիւնը: Բաց են անում կրակ և կաշկանդում են նրան, վորպեսզի նա իր կրակով կամ շարժումով ինքը մեզ հարված չհասցնի: Վերջապես՝ յերբ բոլորովին մոտենում են հակառակորդին, սվիններով նետվում են նրա վրա և վոչնչացնում են նրան: Այդպես է անցնում հարձակողական մարտը:

Ինչպես է ջուրը գործում և ինչ խնդիրներ է կատարում հետախուզութիւնում ու պահպանութիւնում այդ մենք արդեն քննեցինք: Այժմ քննենք, թե ինչ



խնդրի ե դրվում հրաձգային ջոկի վրա հարձակողական մարտում:

Մեր հրաձգային դասակը բաղկացած է յերկու գնդացրային և յերեք հրաձգային ջոկերից: Հետախուզութեան ու պահպանութեան ուղարկվում է կամ ձեռքի գնդացրային կամ հրաձգային ջոկը: Յերբ հակառակորդը հայտնաբերված է, դասակը սկսում է մոտենալ նրան, վորպեսզի հարված հասցնի նրան սվինով: Հակառակորդն, իհարկե, նույնպես պարապ չէ, նա աշխատում է մոտիկ չլթողնել դասակին, և դեռ 2—3 կիլոմետրից սկսում է նրան գնդակոծել հաստոցավոր գնդացիրներից: Դասակում նույնպես կա հաստոցավոր գնդացիր, ուստի վորպեսզի ստիպի լռել հակառակորդին, դասակը նույնպես նրա դեմ կրակ է բաց անում իր հաստոցավոր գնդացրից, իսկ յերբ մոտենում է 800—900 մետր հեռակայութեան վրա, կրակ է բաց անում նաև ձեռքի գնդացրից:

Իսկ ինչ են անում հրաձգային ջոկերը:

Հրացանից կարելի չէ լավ կրակել միայն 400 մետր տարածութեանից: Հրացանային նռնակը նույնպես կարելի չէ նետել հրացանով 300—600 մետրից, իսկ ձեռքի նռնակը՝ ընդամենը 49 մետրից: Իսկ յեթե այդպես է, ապա հրաձգային ջոկերի խնդիրը պետք է լինի՝ ըստ հնարավորին շուտ և առանց կորուսանների մոտենալ հակառակորդին 400 մետր հեռակայութեան վրա, վորպեսզի նրա հետ կրակային մարտ մղի: Ուստի մինչ այդ նրանք հարցակվում են գնդացրային ջոկերի յետեից, իսկ հետո, յերբ գնդացրային ջոկերը կանգ են առնում կրակ բռնալու համար, հրաձգային ջոկերը նրանցից առաջ են անց-

նում, շարժվելով վոստյուններով մի ծածկարանից դեպի մյուսը:

Յերբ դասակը մոտենում է հակառակորդին 400 մետր հեռակայութեան վրա, այդ ժամանակ հակառակորդի կողմից կսկսվի ուժեղ կրակ. կսկսեն վորոտալ և՛ գնդացիրները, և՛ հրացանները, և՛ հրացանային նռնակները: Մեր դասակի գնդացրային ջոկերը միայնակ չեն կարող լռեցնել հակառակորդի կրակային բոլոր կետերը: Նրանց ոգնութեան պետք է հասնեն հրաձգային ջոկերը:

Բայց հրաձգային ջոկերը չպետք է մոռանան, վոր նրանց առջևում սպասում է դեռ սվինի հարվածը:

Ուստի նրանք պետք է պահպանեն իրենց ուժերը գրոհի համար և, հենց վոր հնարավորութեան կա, պետք է առաջ շարժվեն, վորպեսզի նետվեն հակառակորդի վրա բռնամարտի:

Յերբ մոտեցան հակառակորդին 100—200 մետր տարածութեան վրա, կարելի չէ արդեն մեկ թափով նետվել հակառակորդի վրա: Ահա այստեղ հրաձգային ջոկերը պետք է կատարեն իրենց գլխավոր խնդիրը: Սրբնթաց հարված սվինով հակառակորդի առաջավոր կետերի դեմ, հաջողութեան զարգացում խորքից ու կողմերից, հակառակորդից զբաղված տարածութեան իր ձեռքում ամրացնելը—ահա հրաձգային ջոկերի աշխատանքը ձեռքի ու հաստոցավոր գնդացիրներին աջակցութեամբ:

Այսպես ուրեմն, հրաձգային ջոկի խնդիրն է հարձակողական մարտում՝ սվինով վճռական հարված հասցնել հակառակորդին: Բայց հակառակորդից 400



մետրից արելի տարածության վրա ջուրը կարելի չէ ոգտագործել նաև կըրակ մղելու համար:

## ԻՆՉՊԵՍ ԶՈՎԸ ՊԵՏԲ Ե ԸԱՐԺՎԻ ՀԱՐԱՎԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Յեթև տեղանքում կան ծածկված մատույցներ, ինչպես, որինակ՝ ձորակներ, թփուտներ և այլն. ջուրը շարժվում է դասակի զորասյունի կազմով մինչև այն շերտը, վորը զնդակոծում է հակառակորդի ձեռքի գնդացիների գործոն կրակով, այսինքն՝ 800—900 մետր: Այդ տարածությանից, իսկ յեթև տեղանքը բաց է, ապա և դրանից ել առաջ, դասակը մասնատվում է ըստ ջուկերի: Հրաձգային ջուկերը, ինչպես արդեն ասվեց, գնում են սկզբում գնդացրային ջուկերի յետևից 100—150 մետր տարածության վրա, իսկ հետո առաջ են անցնում նրանցից:


Ինչ կարգեր պետք է կիրառի ջուկը:

Ջուկի կանոնագրքային կարգերն են՝ ոձաշարը, յերամաշարը և շվթան:

Բննենք, թե վոր կարգը և յերբ ամենից հարմարն է:

Ջուկը դուրս է յեկել դասակային զորասյունից: Դասակի հրամանատարը հրամայել է նրան շարժվել թփուտների միջով ազարակի և փոքրիկ անտառակի (նկար 7) ուղղությամբ: Տեղանքում սկզբում կան բլրակներ, թփեր, տեղ-տեղ փոքրիկ փոսեր. այնուհետև հակառակորդի ուղղությամբ ձգված է բանջարանոցը, վորը պատած է առվով. ել հետոն ազարակն է փայտի ցանկապատով, ազարակի յետևում բաց հերկած դաշտ է. իսկ ավելի հեռվում անտառակի ծայրում դասավորվել է հակառակորդը: Ջուկի հրամա-

նատարն իր ջուկը կտանի, ծածկվելով սկզբում բլրակներիով ու թփերով: Հրացանաձիգները ջուկի հրամա-



ՆԿԱՐ 7

նատարի յետևից կգնան մի բլրակից դեպի մյուսը, բլրակներից դեպի թփերը: Այնուհետև սկսվում է ա-



առէն: Զոկի հրամանատարը շտապում է թփերից վազել առուն, հրացանաձիգներն ել հետևում են նրան: Յեկ այդպես իծաշարուկով, իրար յետևից, առվով և ապա ցանկապատի տակով, 5 քայլ հեռակայութեամբ սկսում են առաջ շարժվել: Կստացվի ոճաշար կարգ: Ագարակի յետևում գտնվում է բաց դաշտ, հակառակորդից ընդամենը միայն 500 մետր տարածութեամբ: Զոկը պետք է պատրաստ լինի կրակ բանալու: Հրացանաձիգները ոճաշար կարգից դուրս են գալիս աջ ու ձախ, վորպեսզի կրակ բանան: Կստացվի յերամաշար կարգը: Վերջապես՝ գրոհի համար յելման բնագծում, հակառակորդից 200 մետր տարածութեամբ, ջոկը պատրաստ կլինի գրոհի: Հրացանաձիգները փոքրը ինչ կմտտենան ջոկի հրամանատարին. մեկն առաջ կընկնի, մյուսը յետ, սանդղաձև՝ ընկերոջ յետևից: Կստացվի շղթա, կամ ավելի ճիշտ, միջինը շղթայի ու յերամաշարի միջև (խմբակ):

Ահա այսպիսով, նայած տեղանքին ու հանառակորդի կրակին, ջոկը գործադրում է շարժման սյս կամ այն կարգը: Հարց է ծագում, ինչ դրութեամբ հրացանաձիգները պետք է շարժվեն այս կամ այն կարգով: Նայենք նույն 13-րդ նկարին: Հրացանաձիգները շարժվում են, ծածկվելով ըլրակներով: Բըլրակները փոքր են, հրացանաձիգներին ծածկում են միայն մինչև գոտկատեղերը: Ստիպած պետք է շարժվել կռացած, իսկ տեղ-տեղ՝ չորեքթաթ: Այնուհետև սկսվում են թփերը, վորոնք ծածկվում են հրացանաձիգներին ամբողջ հասակով: Հրացանաձիգները գնում են արագ քայլով, առանց կռանալու: Առուն խոր չէ, ծածկում է մինչև գոտկատեղը, ցանկապատին ել սեղմվել է պետք: Շարժումը կատարվում է

կռացած: Ագարակից անմիջապես հետո պատահում են կտրտած ծառերի կոճղեր, իսկ այնուհետև՝ բաց դաշտ: Զոկը սողալով, ծածկվելով կոճղերով, առաջ է շարժվում, և ապա գործադրում վազեվազք:

Վազեվազքը կարող է լինել և՛ ամբողջ ջոկով և՛ մի-մի հոգով: Յեթե հակառակորդի կրակը շատ ուժեղ չէ, իսկ առջևում կա թաքստոց, վորտեղ ամբողջ ջոկը կարող է ծածկվել, ավելի լավ է վազել ամբողջ ջոկով: Ընդհակառակն՝ հակառակորդի ուժեղ կրակի դեպքում և թիանդամայն բաց տեղանքում հարկավոր է վազեվազքը կատարել մի-մի հոգով: Վազեվազքով շարժվել հարկավոր է միայն այն ժամանակ, յերբ ջոկին ոգնում է կամ գնդացրային կամ մի այլ հրաձգային ջոկ: Ծայրահեղ դեպքում ջոկի մի մասը պետք է կրակ մղի հակառակորդի դեմ, իսկ մյուս մասը վազի, կամ ընդհակառակն՝ այն մասը, վոր վազել է, կրակ է բացում նոր բնագծից, իսկ կրակող մասը սկսում է վազեվազքը:

Վազեվազքի ժամանակ հարկավոր է պահպանել հստեյալ պայմանները: Նախ՝ նոր բնագիծը, դեպի որը վազելու յեն, պետք է հնից 150 մետր մոտ չըլինի, վորպեսզի նոր բնագծից կարելի լինի կրակել սոր, փոքր նշանոցով<sup>1)</sup>: Յերկրորդ՝ նախ քան վազելը, յուրաքանչյուր հրացանաձիգ պետք է նշի իր տեղը նոր բնագծում, վորտեղ նա մտադիր է պառկել, այլ կերպ նա կվազի, տեղ կհասնի և կսկսի իր համար տեղ վորոնել, այս ու այն կողմը թըն գալով, իսկ հակառակորդն այդ միջոցին կարող է նրան խըփել: Յերրորդ՝ ամբողջ տարածութեյունը, — 150 մետր

<sup>1)</sup> Հակառակորդին ավելի մոտենալիս այդ տարածութեյունը պետք է փոքրանա:



ըր, — չպետք է միանգամից վազել, այլ պետք է շարժվել վոստյուններով 40—50 մետր, վորովհետև հրացանաձիգը յերկար ժամանակ հակառակորդի աչքի առջևում լինի, հակառակորդը ժամանակ կուեննանշան բռնելու և նրան խփելու: Բացի դրանից հրացանաձիգը, վազելով առանց հանգստի 150 մետր, կըհոգնի և նոր բնագծում այնպես կսկսի շնչել, վոր չի կարողանա կրակել: Չորրորդ՝ կանգառումների ժամանակ, 40—50 մետր անցնելուց, պետք չէ կրակել, վորովհետև հրահանը պետք է պահպանիչ վոտի վրա լինի, վորպեսզի շտապելիս պատահմամբ չկրակի ու չզիպչի առջևից վազող ընկերոջ: Վերջապես հինգերորդ՝ հարկավոր է վազել վոչ թե զիգզագներով (մի կողմից՝ մյուսը) այլ ուղիղ դեպի աչքադրած կետը, վորովհետև վորքան հրացանաձիգն ավելի պտոյտներ գործի, այնքան յերկար ժամանակ նա կգտնվի հակառակորդի նշանի առաջ:

Յեթե ջոկը ստիպված պետք է լինի անցներև հակառակորդի հրետանական կրակով ուժեղացող տարածությունով, լավ է այդ տարածությունն անցնելուց առաջ մի փոքր հանգստանալ և ապա անցնել, արագ վոստյուններով վազելով: Յեթե հակառակորդի հրետանական կրակով ուժեղացող տարածությունը փոքր է, ավելի լավ է շրջանցել այն, աշխատելով չկորցնել ուղղությունը:

Վերջապես՝ կարելի չէ սպասել, մինչև հակառակորդի կրակը կհանդարտի (մրկային լինել նա յերկար չի կարող), և ապա վազելով անցնել այդ տարածությունը:

## ԻՆՉՊԵՍ ԲՈՂԱՐԿՎԵԼ

Քողարկվել հարկավոր է շարունակ, բոլոր դեպքերում, վորպեսզի քիչ կորուստներ լինեն հակառակորդի կրակից, վորպեսզի ծածկեն նրանից իրենց հարձակման ծրագիրը և հանկարծակի հարձակվեն նրա վրա այնտեղից, վորտեղից նա չի սպասում: Առանձնապես հարկավոր է ծածկվել հակառակորդի սավառակներից, վորոնք շատ հեշտությամբ գտնում են գետնի վրա մինչև իսկ ամենափոքր խմբակները:

Քողարկման ամենապարզ միջոցները ջոկի համար կլինեն հետևյալները: Գործադրել շարժման համար այնպիսի կարգ, վորը ծածկվել շրջապատող տեղանքով, 7-րդ նկարում մենք տեսանք, վոր բլրակներով, թփուտներով, սուվով և ցանկապատի յերկայնքով անցնելիս հարմարում է ոձաշարը: Վորտեղ կան ծածկարաններ, պետք է գնալ կուացած, բաց տեղերում գործադրել վազեվազքը և այլն:

Միտ նկատելի չէ լինում ջոկը վազեվազքի ժամանակ: Ուստի վազեվազքի ժամանակ հարկավոր է պահպանել հետևյալ պայմանները: Ինչպես առաջ սաված եր, նախ քան վազելը հարկավոր է նշել այն կետը, վորտեղ պտոկելու յես: Բարձրանալ հարկավոր է սահուն (զանդաղ), վորովհետև տեղից արագ ցատկումը մատնում է հրացանաձիգին: Վազել հարկավոր է արագ, գլուխը չպետք է թափահարել այլ փոքր ինչ պետք է կուացնել, չպետք է որորել բունը, (կուրքըն ու փորը), այլ հարկավոր է մի փոքր կուանալ, այն ժամանակ բունը չի որորվի, ձեռքերը չպետք է թափահարել, այլ պետք է պահել մեջքի յետևում կամ ամուր բռնել գոտկատեղում, հրացանը սեղմել



ուսին: Յերբ վազել, հասել ես նշածդ տեղը, հարկավոր ե ընկնել «քարի» պես, յեթե վոչ հակառակորդը կնկատի, թե վորտեղ պառկեցիր: Սողունները ժամանակ հարկավոր ե գործադրել այսպես կոչվող ծովաշնների միջոցը. նրացանաձիգը պառկում ե փորի վրա, ամուր սեղմելով գետնին. գրուխը փոքր ինչ բարձրացրած, ձեռքերը ծալած արմունկներում, հրացանը վերցնում ե յերկու ձեռքով. շարժումը կատարում ե վտանների ծայրերով ու ձեռքերի արմունկներով:

Կանգառուների ժամանակ հրացանաձիգները պետք ե իրենց քողարկեն ճյուղերով, խոտով, ծղոտով, ծածկելով գլխարկը, վրդը, ուսերն ու գոտին: Բայց չպետք ե մոռանալ նաև այսպիսի մի հանդամանք: Չի կարելի որինակ՝ քողարկել իրեն ճյուղերով և շարժվել հերկած դաշտով, կատացվի վազող թուփ, վորն իհարկե, ամենևին չի քողարկում, այլ ընդհակառակն յերևան ե հանում հրացանաձիգին:

Վազել հարկավոր ե այն ժամանակ, յերբ կրակում ե մեր գնդացիքը, վորովհետև նրա կրակը ստիպում ե հակառակորդին թագնվել պատվարի յետևում և իր դիտողությունից թողնել վազող հրացանաձիգներին: Հետզհետե, յերբ մոտենում են հակառակորդին, հարկավոր ե խուսափել լավ յերևացող առանձին առարկաներից, ինչպես որինակ՝ առանձին ծառեր, քամադացներ և այլն, վորովհետև հակառակորդը չափել ե տարածությունը դեպի այդ առարկաները և փորձնական հրաձգություն ե կատարել:

Յերբ հարկ ե լինում կանգ առնել բաց վայրերում, հարկավոր ե հակառակորդի կրակից պաշտպան-

վելու համար՝ փորել անհատական (մի հոգու) խրամատ:

Ողաջին հակառակորդից քողարկվել հարկավոր ե այսպես: Ամենից առաջ հարկավոր ե դիտել յերկինքը: Սավառնակը յերևալուն պես՝ հարկավոր ե արագ պառկել, հետո վորոշել, թե ում սավառնակն է՝ մերն ե, թե հակառակորդին: Պատահում ե այնպես, վոր հրացանաձիգներն առաջ իմանում են, թե ում սավառնակն ե, և հետո, յերբ տեսնում են, վոր հակառակորդի սավառնակն ե, սկսում են պառկել, բայց արդեն ուշ ե, վորովհետև սավառնակը նրանց նկատել ե: Պառկել հարկավոր ե ըստ հնարավորության ստվերոտ կողմում, առվում և՛ ընդհանրապես վորևե ծածկարանի յետևում, և համենայն դեպս վոչ ճանապարհին: Բայց այդ չի նշանակում, վոր հարկավոր ե վազվզել ու ստվեր կամ ծածկարան փնտրել, այլ հարկավոր ե անմիջապես պառկել, վորտեղ կանգնել ես և հետո արդեն, սողալով հասնել ծածկարանին, յեթե նա մոտիկ ե:

### ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿՐԱԿ ՄՂԵԼ

Հրացանը մարտիկի հավատարիմ և անփոխարինելի ընկերն ե: Հակառակորդը ցրվում ե տեղանքում մանր խմբակներով. ծածկվում ե յուրաքանչյուր թփի, յուրաքանչյուր բլրակի յետևում, արագ յերևում ե և արագ անհայտանում: Վնչ թնդանոթը, և վոչ մինչև իսկ գնդացիքը չեն կարող բռնել հակառակորդի փոքրիկ պատկերը: Միայն հրացանաձիգի սուր աչքն ու հրացանի դիպուկ կրակը կարող են բռնել նրան: Ամենաժանր ըոպեյին, բռնամարտից առաջ, յերբ թընդանոթը, վորպեսզի յուրախիններին չդիպչի, փոխա-



դրում ե իր կրակը հակառակորդի ոժանդակները դեմ, իսկ հակառակորդը դուրս ե սողում բոլոր ձեղքերից և սպանիչ կրակ ե բաց անում, մարտիկի ձեռքում, վորպես հուսալի միջոց մնում ե նույն հրացանը:

Հրացանաձիգների մենագարկ կրակը կարող ե հաջողութամբ հարվածել յուրաքանչյուր բաց նշան (խողոր ու մանր) 400 մետրից (600 քայլ) և ավելի մոտիկից: Ուստի սահմանված ե, վոր հրաձգային ջուրը կրակ են բացում հակառակորդից 400 մետր և ավելի մոտ տարածությունից: Գերազանց հրացանաձիգները, ջուրի հրամանատարի ցուցումով կրակ են բացում միջին հեռակայություններից (700-800 մետրից):

Նախ քան կրակ բանալը պետք ե նշել նպատակը, թե ում դեմ պետք ե կրակել: Յուրաքանչյուր նըշան քննության ե առնվում յերկու տեսակետից. հարկավոր ե քննել՝ կարելի յե արդյոք ղիպցնել այդ նըշանին և հարկավոր ե արդյոք կրակել նրա վրա (վըտանգավոր ե արդյոք այժմ):

Յենթադրենք ջուրի առջևում կա յերկու նշան. հակառակորդի հրաձգային խմբակն ե 250 մետրի վրա. հակառակորդի հրացանաձիգները խրամատավորվել են բայց վատ, նրանց դեմ կրակը շատ շահավետ կլիներ: Բայց նրանց կողմից կրակը շատ գործոն չե. նրանց առջևում կա փոքրիկ բլրակ, և գնդակները դենն են անցնում: Մյուս նպատակն ե հակառակորդի ձեռքի գնդացիքը 450 մետր հեռակայությամբ. գնդացիքը լավ քողարկված ե, նրան ղիպցնելը չափազանց դժվար ե: Բայց հակառակորդի գնդացրի կրակը խփուս ե մեր հարևան ջուրի թևին, և ջուրը կպչելով գետնին, հնարավորությունն չունի առաջ շարժվելու: Ինչպե՞ս

վարվել այս դեպքում, ում դեմ կրակել: Իհարկե, պետք ե կրակել հակառակորդի ձեռքի գնդացրի դեմ, վորովհետև թեև այդ նշանը դժվար ե, բայց նա առ այժմ վտանգավոր ե, և նրան պետք ե անվնաս դարձրնել:

Նպատակը նշված ե: Այժմ հարկավոր ե ընտրել մի հարմար վայր հրաձգության համար: Կրակ բանալու հարմարության համար հարկավոր ե, վոր նշանը լավ յերևա, հենարան լինի հրացանի համար (կույտ, կտրած կոճղ) և ծածկարան լինի հրացանաձիգ համար (թուփ, բանջարանոցում ածու, հնձած խոտ, կամ ցորեն): Յերբ հենարան ու ծածկարան չկա, հրացանաձիգները պետք ե իրենք շինեն այդ՝ թիակի կամ փաթաթած գրատի միջոցով: Յերբ հրաձգության վայրն ընտրված ե, հարկավոր ե դնել նշանոցը և գտնել նըշանառության կետը: Ծիշտ նշանոց դնելու համար հարկավոր ե իմանալ տարածությունը դեպի նշանը, իսկ դրա համար հարկավոր ե փորձառությունն ունենալ տարածությունն աչքաչափով վորոշելու համար: Յեթե մինչև նշանը տարածությունը 300 քայլից ավելի չե, կարելի յե կրակել 2 նշանոցով, 300—500 քայլի վրա՝ 4 նշանոցով. 500—700 քայլից՝ 6 նշանոցով: Անդրանցման դեպքում հարկավոր ե նշանոցն իջեցնել մեկ աստիճանով, իսկ չհասի դեպքում՝ բարձրացնել: Նշանառության կետը միշտ պետք ե վերցնել նշանի ներքին յեզրի մեջտեղից: Այսպես, որինակ՝ յեթե գնդակոծվում ե խրամատով ծածկված նըշանը, հարկավոր ե նշան բռնել խրամատի ստորոտի մեջտեղին:

Յերբ այս բոլոր պայմանները կատարված են, այն ժամանակ յուրաքանչյուր հրացանաձիգ սկսում ե կրակել: Կրակելիս հարկավոր ե հետևել, վոր հրա-



ձգությունը չգտնա փամփուշտների անոգուտ վատնում: Ընդհանրապես չպետք է շտապել կրակելու: Բայց յերբ պարագան պահանջում է, ինչպես որինակ՝ սվինամարտի անցնելուց առաջ, հակառակորդին հետապնդելիս, հարկավոր է արագ հրաձգություն: Բայց և այնպես մի բոլորում 10—12 ձրգից ավելի պետք է կատարել:

Յերբ հրաձգությունը դադարում է, հարկավոր է անմիջապես լցնել, լրացնել պահեստատուփը: Վազեվազքի ժամանակ հրահանը պետք է դնել պահպանիչ վոտքի վրա, հակառակ դեպքում կարող է ստացվել պատահական ձիգ, կամ կարող է փակադակը կորչել: Հրաձգության ժամանակ չպետք է մոռանալ փամփուշտների մասին: Յուրաքանչյուր հրացանաձգին հասնում է 120 փամփուշտ: Բայց նա կարող է ավել փամբուշտ ունենալ (պաշարը յերբեք չի խանգարի): Հենց վոր հրացանաձիգը տեսնում է, վոր կոմպլեկտի կեսն արդեն ծախսված է (60 հատ է մնում), այդ մասին անմիջապես պետք է զեկուցի ջոկի հրամանատարին: Բայց չպետք է հույսը դնել փամփուշտները միայն թիկունքից լրացնելու վրա: Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուրն ինքը մտածի իր մասին. հարկավոր է ժողովել դաշտում թափած փամփուշտները, վերցնել սպանվածներից ու շարքը թողնող վիրավորված ընկերներին:

### ԻՆՉՊԵՍ ԳՐՈՅԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ

Ինչպես արդեն ասված է, գրոհը սկսվում է հակառակորդից 100—200 մետր տարածությունից:

200 մետր տարածությունը սահմանված է հետև-

յալ նկատառումներով: Յեթե գրոհն սկսենք ավելի վաղ, այն ժամանակ հրացանաձիգներն սկզբում անցնելով արագացրած քայլով և ապա՝ վազքով 200 մետրից ավելի, շատ կհոգնեն, և սվինների հարվածը բավականաչափ ուժեղ չի լինի: Բացի դրանից հրացանաձիգները շատ յերկար ժամանակ կմնան հակառակորդի աչքի առաջ (ամբողջ հասակով): Մյուս կողմից՝ յեթե գրոհից առաջ հավաքվեն 200 մետրից ավելի մոտ, այն ժամանակ մեր հրետանին, վոր նախապատրաստում է գրոհը, կարող է իր արկերով հարվածել իր հետևակին, թեև այստեղ պետք է հաշվի առնել այսպիսի պայմաններ. յեթե մեր հրետանին թեև հարկերակ է վարում, կամ նրա դիտողը մոտ է, այդ դեպքում գրոհի համար յեկման բնագիծ կարելի չի ընտրել 200 մետրից ավելի մոտ: Համենայն դեպս ավելի լավ է ընկնել իր հրետանու առանձին արկերի տակ, քան թե գրոհի անցնել մեծ տարածությունից և յենթարկվել հակառակորդի գնդացիներին մրբրկային կրակին: Յերբ գրոհը նախապատրաստվում է միայն հաստոցավոր ու ձեռքի գնդացիներով, այն ժամանակ գրոհի համար յեկման բնագիծն ընտրվում է 100 մետրից և ավելի մոտ տարածությունից:

Գրոհի համար յեկման բնագիծի վրա հրաձգային ջոկը պետք է ըստ հնարավորին ընդունի այնպիսի դրություն, վորպեսզի իրենով չծածկի իր գնդացիների կրակը և ձգտի իր համար նշված՝ հակառակորդի կետը գրոհել թեից:

Նախ քան գրոհի անցնելը՝ հարկավոր է գրոհը նախապատրաստել կրակով՝ ստիպել, հակառակորդին կաշել գետնից և դադարեցնել կրակը:

Վորպես կանոն, հրաձգային ջոկը գրոհում է



գնդացրային ջոկի ոգնությամբ: Բայց յեթե այդպիսի ջոկեր չեն նշանակված նրան ոգնելու, այն ժամանակ նա ինքը պետք է հրացանային ու նռնակային կրակով նախապատրաստի իր գրոհը:

Վեր մոմենտին պետք է անցնել գրոհի:

Գրոհը կարող է սկսվել դասակի հրամանատարի պատվերով (պայմանական նշանով):

Գրոհի սկիզբը կարող է ծառայել մեր հրետանու կրակը հակառակորդի թիկունքը փոխադրելը: Վերջապես՝ ջոկը գրոհի կարող է անցնել նաև իր ջոկի հրամանատարի նախաձեռնությամբ:

Նորից դառնանք 7-րդ նկարին: 4-րդ ջոկը կրակով նախապատրաստում է գրոհը, հարվածելով պուրակից հարավ-արևելք գտնվող հակառակորդի կետերը: Նրա վերջնական խնդիրն է՝ մյուս ջոկերի հետ միասին գրավել բարձունքի յետևում գտնվող ագարակը: Նրանաձիգը հաջող կրակել է և նռնակը ընկել է ուղիղ հակառակորդի խրամատը: Նռնակը պայթել է, առաջացնելով ծխի ու փոշու ամպ: Հակառակորդը շփոթվել է ու դադարեցրել է կրակը: Պետք է արդյոք ըստ պատկերի հրամանատարի պատվերին՝ գրոհի անցնելու մասին: Այդպիսի մոմենտը, թե վոր բաց թողնելը, նա այլևս կարող է չկրկնվել: Ջոկն իր հրամանատարի նախաձեռնությամբ նետվում է գրոհի: Հակառակորդից 40—45 մետրի վրա ջոկի բոլոր հրացանաձիգները նետում են ձեռքի նռնակներ և մի վոստյունով ներս են խուժում հակառակորդի բունը: Հակառակորդը յետ է նահանջում: Ջոկը նրան հետապնդում է: Բայց հարևան 5-րդ ջոկը դեռ չի տապալել ձախից նստած հակառակորդին: Այդ հակառակորդը թևահար կրակով փնտրում է նաև 4-րդ ջոկին:

Ջոկը մի առ ժամանակ կանգ է առնում և կրակ է բացում հակառակորդի թևային կետի դեմ: Խաչաձև կրակի ու 5-րդ ջոկի ճնշման տակ հակառակորդը թևից նահանջում է, նրան հետապնդում է 5-րդ ջոկը: 4-րդ ջոկը շարունակում է շարժվել իր ուղղությամբ և ավելի յետ խորանում հակառակորդի դասավորության մեջ: Բայց ահա նա կանգ առավ: Նրա ճանապարհին հակառակորդի հաստոցավոր գնդացիներն անպատիժ կրակ է վարում ջոկի դեմ: Դասակի ձեռքի գնդացիքը զբաղված է, 3-րդ ջոկին ոգնելով, իսկ հաստոցավոր գնդացիքը յետ է մնացել: Ջոկն անցնում է պաշտպանողական դրության: Մոտերքում կա հակառակորդի խրամատը, վորն ավերված է մեր հրետանով: Ջոկը գրավում է այդ խրամատը և կրակ է վարում հակառակորդի գնդացիների դեմ: Գերազանց հրացանաձիգները ձգտում են խփել նշանառուին: Վրա հասավ և մեր հաստոցավոր գնդացիքը: Նա իր կրակով աջակցեց 4-րդ ջոկին: Ջոկը գրավում է հակառակորդի գնդացիքը: Հակառակորդը տապալված է: 5-րդ ջոկը առաջ է շարժվել հակառակորդի պաշտպանողական շերտի հակառակ յեզրը: Մոտերքում հակառակորդի մարտկոցը շտապում է փախչել: Բայց քարշակները չեն մոտենում: Համարները խուճապով թողնում են հրանոթը, հեռանում: 3-րդ ջոկի հրամանատարը գայթակղվել է հեշտ ավարով, նա շտապում է դեպի հրանոթը: Նրան չեն ուղում զիջել հաջողության դափնիները հարևան ջոկերը, և ամբողջ դասակը տոնում է իր հաղթանակը հակառակորդի մարտկոցի վրա:

Բայց պատահում է և՛ անհաջողություն: Գրոհը, ինչպես ասում են, կարող է խեղդվել: Ջոկի հրամա-



գնդացրային ջոկի ոգնությամբ: Բայց յեթե այդպիսի ջոկեր չեն նշանակված նրան ոգնելու, այն ժամանակ նա ինքը պետք է հրացանային ու նունակային կրավելով նախապատրաստի իր զրոհը:

Վեր մոմենտին պետք է անցնել գրոհի:

Գրոհը կարող է սկսվել դասակի հրամանատարի պատվերով (պայմանական նշանով):

Գրոհի սկիզբը կարող է ծառայել մեր հրետանու կրակը հակառակորդի թիկունքը փոխադրելը: Վերջապես՝ ջոկը գրոհի կարող է անցնել նաև իր ջոկի հրամանատարի նախաձեռնությամբ:

Նորից դառնանք 7-րդ նկարին: 4-րդ ջոկը կրավելով նախապատրաստում է գրոհը, հարվածելով պուրակից հարավ-արևելք գտնվող հակառակորդի կետերը: Նրա վերջնական խնդիրն է՝ մյուս ջոկերի հետ միասին գրավել բարձունքի յետևում գտնվող ազարակը: Նրանաձիգը հաջող կրակել է և նոնակը ընկել է ուղիղ հակառակորդի խրամատը: Նոնակը պայթել է, առաջացնելով ծխի ու փոշու ամպ: Հակառակորդը շփոթվել է ու դադարեցրել է կրակը: Պետք է արդյոք ըստ պատել դասակի հրամանատարի պատվերին՝ գրոհի անցնելու մասին: Այդպիսի մոմենտը, թե վոր բաց թողեցիր, նա այլևս կարող է չկրկնվել: Ջոկն իր հրամանատարի նախաձեռնությամբ նետվում է գրոհի: Հակառակորդից 40—45 մետրի վրա ջոկի բոլոր հրացանաձիգները նետում են ձեռքի նռնակներ և մի վոստյունով ներս են խուժում հակառակորդի բունը: Հակառակորդը յետ է նահանջում: Ջոկը նրան հետապնդում է: Բայց հարևան 5-րդ ջոկը դեռ չի տապալել ձախից նստած հակառակորդին: Այդ հակառակորդը թևահար կրակով քիստում է նաև 4-րդ ջոկին:

Ջոկը մի առ ժամանակ կանգ է առնում և կրակ է բացում հակառակորդի թևային կետի դեմ: Խաչաձև կրակի ու 5-րդ ջոկի ճնշման տակ հակառակորդը թևից նահանջում է, նրան հետապնդում է 5-րդ ջոկը: 4-րդ ջոկը շարունակում է շարժվել իր ուղղությամբ և ավելի յետ խորանում հակառակորդի դասավորություն մեջ: Բայց անա նա կանգ առավ: Նրա ճանապարհին հակառակորդի հաստոցավոր գնդացիներ անպատիժ կրակ է վարում ջոկի դեմ: Դասակի ձեռքի գնդացիները զբաղված է, 3-րդ ջոկին ոգնելով, իսկ հաստոցավոր գնդացիները յետ է մնացել: Ջոկն անցնում է պաշտպանողական դրություն: Մոտերքում կա հակառակորդի խրամատը, վորն ավերված է մեր հրետանով: Ջոկը գրավում է այդ խրամատը և կրակ է վարում հակառակորդի գնդացի դեմ: Գերազանց հրացանաձիգները ձգտում են խփել նշանառուին: Վրա հասավ և մեր հաստոցավոր գնդացիները: Նա իր կրավելով աջակցեց 4-րդ ջոկին: Ջոկը գրավում է հակառակորդի գնդացիները: Հակառակորդը տապալված է: 5-րդ ջոկը առաջ է շարժվել հակառակորդի պաշտպանողական շերտի հակառակ յեզրը: Մոտերքում հակառակորդի մարտկոցը շտապում է փախչել: Բայց քարշակները չեն մոտենում: Համարները խուճապով թողնում են հրանոթը, հեռանում: 3-րդ ջոկի հրամանատարը գայթակղվել է հեշտ ավարով, նա շտապում է դեպի հրանոթը: Նրան չեն ուզում զիջել հաջողություն գափնինները հարևան ջոկերը, և ամբողջ դասակը տոնում է իր հաղթանակը հակառակորդի մարտկոցի վրա:

Բայց պատահում է և՛ անհաջողություն: Գրոհը, ինչպես ստում են, կարող է խեղդվել: Ջոկի հրամա-



նատարը պետք է համառորեն կրկնի գրոհը և միայն դասակի հրամանատարի պատվերով, յետ տանի ջոկը դեպի մատնանշած բնագիծը:

## ՋՈԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՉ ԽՆԳԻՐ ՌԻՆԻ ՋՈԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ԴԱՍԱՎՈՐՎՈՒՄ

Ինչպես և հարձակման ժամանակ, հրաձգային ջոկերի հիմնական խնդիրն է պաշտպանությունում սվինով հարվածը: Յերը հակառակորդը ներս է խուժում դասակի պաշտպանության շերտը, հրաձգային ջոկը հակադրոհով նրան յետ է շարտում: Յեթե այդ այդպես է, ուրեմն, քանի դեռ հակառակորդը հարձակվում է, նրա դեմ կրակային կռիվ են մղում միայն գնդացրային ջոկերը: Իսկ հրաձգային ջոկերը, վորպեսզի իրզուր կորուստներ չուեննան հակառակորդի կրակից, դասավորվում են գնդացրային ջոկերի յետևում ծածկված, մեծ մասամբ վորևե բարձունքների յետևում, թփուտներում, ձորում:

Բայց չպետք է կարծել, թե հրաձգային ջոկերն ամեննին կրակ չեն վարում պաշտպանությունում: Պատահում են դեպքեր, յերը դասակի շրջանի առջև վում տեղանքը խիստ կտրատված է, այսինքն՝ շատ բարձունքներ, ձորեր կան: Դասակի յերկու գնդացրային ջոկերի ուժը չի պատի գնդակոծել այդ բոլոր ձորերն ու բարձունքները: Այդ դեպքում դասակի հրամանատարն առաջ է քաշում, գնդացրային ջոկերի գծով, մի վորևե հրաձգային ջոկ կամ ամբողջովին, կամ վերցնում է նրանից միայն գերազանց հրացանաձիգներին և կամ միայն մեկ նոնաձգի, և նրանց

տալիս է կրակային խնդիր: Գերազանց հրացանաձիգներն ու նոնաձիգները կարող են ստանալ առանձին խնդիր նաև այն դեպքում, յերը հրաձգային ջոկըն առաջ է քաշված դեպի առաջին գիծը:


Բայց և դասակային շրջանի խորքում գտնվելով, հրաձգային ջոկերը պետք է պատրաստ լինեն նույնպես կրակ վարելու: Նրանց կրակը հարկավոր է այսպիսի դեպքերում. յերը հակառակորդը շատ կմոտենա դասակային շրջանի առաջին յեզրին (գրոհի կանցնի) այն ժամանակ գնդացրային ջոկերի արանքից իրենց կրակով պետք է ոգնեն նրանց՝ գնդակոծելու հակառակորդին, յերը նա կերևա բաց թևից, կամ կներխուժի հարևան դասակի շրջանը: Այն դեպքում, յերը հակառակորդը կներխուժի գնդացրային ջոկերի արանքն այնպես սրընթացվոր հրաձգային ջոկերը ժամանակ չեն ուեննա հակադրոհի անցնելու, նրանք պետք է կրակով կասեցնեն հակառակորդին, մինչև վոր յետևում գտնվող կամ հարևան գորամասերը կանցնեն հակադրոհի: Այսպիսով հրաձգային ջոկերի հիմնական խնդիրը պաշտպանությունում, ինչպես ասացինք, սվինով հարվածն է, բայց նրանք պետք է պատրաստ լինեն և կրակ վարելուն:

Դասավորված է արդյոք հրաձգային ջոկը դասակային շրջանի խորքում, թե նա քաշված է առաջին գծի վրա, միևնույն է, նա իրեն համար պետք է ուեննա խրամատներ կամ անհատական, կամ խմբակային, — 2—4 հրացանաձիգներին համար, կամ ընդհանուր խրամատ՝ ամբողջ ջոկի համար, և կազմում է կրակային կետ:

Յենթազրեք, վոր հրաձգային դասակը պաշտպանության համար ստացել է այսպիսի մի շրջան-



Կովարկ գյուղը բացառյալ և 74,3 բացարձուները  
 ներառյալ (տես նկ. 8): Աջից ու ձախից հարևաններ են:  
 Դասակի հրամանատարը գնահատել է շրջանի առջև



Նկար 8

յեղած տեղանքը և գտել է, վոր միայն գնդացրային  
 ջոկերով նա չի կարող գնդակոծել այն բոլոր ուղղու-  
 թյունները, վոր կան դասակային շրջանի առջև:

Այդ ուղղությունները հետևյալն են. Հյուսիս-արև-  
 մուտքից դեպի Կովարկ տանող ճանապարհից  
 անցնող ձորակը, 79,8 բարձունքը, 79,2 բարձունքը  
 և վտակի հովիտը. բացի դրանից հարկավոր է կրա-  
 կային կապ ունենալ հարևանների հետ: Չորակը և  
 79,8 բարձունքը գնդակոծելու և աջ հարևանի հետ  
 կապ պահելու համար դասակի հրամանատարը նշա-  
 նակում է ձեռքի գնդացիները: Վտակի հովիտը գնդա-  
 կոծելու և ձախ հարևանի հետ կապ պահելու համար՝  
 հաստոցավոր գնդացիները՝ գնդացրային ջոկերի արան-  
 քից կրակն ուժեղացնելու և 79,2 բարձունքը գնդա-  
 կոծելու համար նշանակում է 3-րդ հրաձգային ջոկին,  
 տարով գնդակոծի համար ձորակի դարավուլից մին-  
 չև 79,2 բարձունքը: 4-րդ և 5-րդ ջոկերը դասավոր-  
 վում են դասակային շրջանի խորքում 74,3 բարձուն-  
 քի յետևում:

3-րդ հրաձգային ջոկի հրամանատարը ստացել  
 է դասավորության կետն ու գնդակոծի տեղամասը:  
 Նրա ջոկն առայժմ գտնվում է 74,3 բարձունքի յետե-  
 վում: Ինքը գննում է իր դասավորության առջևում  
 գտնվող տեղանքը և վորոշում է, վոր խրամատը հար-  
 կավոր է տեղավորել մի փոքր ցած, վորպեսզի կարելի  
 լինի ավելի լավ գնդակոծել ձորակն և ավելի լավ  
 լինի քողարկումը: Բայց վորովհետև ցածից ավելի  
 վատ է գնդակոծել 79,2 բարձունքը, ուստի հարկավոր  
 կլինի յերեք գերազանց հրացանաձգի տեղավորել մի  
 փոքր ավելի բարձր: 79,2 բարձունքում հակառակորդը  
 չարող է տեղավորած լինել իր զիտակետը, գուցե և  
 գնդացիները, և անա գերազանց հրացանաձգիները կը-  
 գնդակոծեն զիտողներին ու նշանառուին: Ուրեմն



հարկավոր ե խրամատ փորել 4 հոգու վերևում և 5 հոգու ներքևում (ինքը ջուկի հրամանատարը կգտնվի գերազանց հրացանաձիգների հետ): Պետք է չափել տարածութունը մինչև 79,2 բարձունքը մինչև թըփուտներն ու ձորակի դարափուլը: Յերբ ջուկի հրամանատարն արդեն զննել է տեղանքը և նշել է ջուկի դասավորության պլանը, նա վերադառնում է ջուկի մոտ և նրան տանում է դասավորության վայրը: Այնտեղ նա բացատրում է ջուկին, թե վորտեղից է սպասվում հակառակորդը (ցույց է տալիս ձեռքով), ինչ խնդիր ունի վաշտն ու դասակը, վորտեղ պետք է դասավորվի հրացանաձիգների մի խմբակը և վորտեղ՝ մյուս խմբակը (գերազանց հրացանաձիգները), մեկ-յերկու հրացանաձիգների վրա պարտականութուն է դնում դիտել հակառակորդին, ձխակողմյան հարեանին և դասակի հրամանատարի նշաններին:

Դրանից հետո ջուկի հրամանատարը հրամայում է սկսել փորել խմբակների խրամատներ. ջուկում է յերկու հրացանաձիգ և հրամայում է նրանց չափել տարածութունը մինչև ձորակի դարափուլը, մինչև թփուտներն ու 79,2 բարձունքը:

Յերբ այդ բոլոր աշխատանքները կատարված կլինեն, ջուկի հրամանատարը հայտնում է նրանց տարածութունը մինչև չափած տեղական առարկաները: Մասնանշում է, վոր յեթե հակառակորդը յերևալու լինի դարափուլի կամ թփուտների մոտ, նրա գեմ պետք է կրակ բաց անեն աջ խմբակի հրացանաձիգները, իսկ յեթե 79,2 բարձունքի վրա՝ կրակ են բաց անում գերազանց հրացանաձիգները: Դրանից հետո նա դնում է դիտող՝ հակառակորդին դիտելու համար, և մնացած հրացանաձիգների հետ տեղավորվում է

ծածկված՝ խրամատի մոտ (փոքր բարձունքի յետևվում):

Այդպես է ջուկը դասավորվում պաշտպանության առաջին գծում:

Յերբ հրաձգային ջուկը դասավորվում է դասակային շրջանի խորքում, նույնպես փորում է իր համար խրամատ (մեծ մասամբ անհատական, վորովհետև սրանք ավելի քիչ են նկատելի): Յեթե ջուկին տրվում է կրակային խնդիր, ջուկի հրամանատարը վարվում է նույնպես, ինչպես առաջին գծում դասավորության ժամանակ, այսինքն չափում է տարածութունը մինչև նկատելի տեղական առարկաները և բաշխում է նպատակները հրացանաձիգների միջև: Բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո մնում են մեկ-յերկու դիտողներ խրամատում (յերկու հոգի՝ բոլոր անհատական խրամատների համար), իսկ ամբողջ ջուկը դասավորվում է ծածկված խրամատի մոտերքում:

Բացի դրանից ջուկի հրամանատարը ցուցում է ստանում, թե ինչ ուղղությամբ անցնել հակազորի, և անա այդ ուղղութունը նա պետք է հետախուզի և նկատի, վորպեսզի չսխալվի հակազորի ժամանակ:

## ԻՆՉՊԵՍ ՔԱՂԱՐԿՎԵԼ

Պաշտպանության ժամանակ ջուկի համար ավելի հեշտ է քողարկվել, քան թե հարձակման ժամանակ: Բողարկման նպատակով պետք է պահպանել հետևյալ պայմանները: Խրամատը չպետք է տեղավորել բարձունքի գագաթին. առանձին շենքերին մոտիկ, ան-



տառակի ծայրին: Ամենից լավ է խրամատը դասավորել բարձունքի ստորին (յեթե միայն չի ծածկուած գնդակոծը), բանջարանոցներում, թփուռաներում առվի յերկայնքով:

Սրամատը պետք է քողարկել այսպես: Սրամատի փոսը փորելիս, հողի վերին շերտը կամ ճիւղ պետք է դնել մի կողմ, և յերբ փոսը փորված կլինի, այդ վերցրած հողը պետք է դնել պատվարի վերևում, այն ժամանակ պատվարը չի ջոկվի շրջապատող տեղանքից: Յեթե խրամատի չորս կողմը պատած է խոտով, այն ժամանակ պատվարը պետք է ծածկել ճիւղներով: Ծիւղ պետք է վերցնել վորեն փոսից, իսկ առվելի լավ է՝ այնտեղից, վորտեղ մտադիր են կեղծ խրամատ պատրաստել: Ծիւղ պետք է ջրել, վորպեսզի խոտը չչորանա ու չդեղնի: Սրամատի փոսը լավ է յերևում, յերբ նայում ենք նրա վրա սավառնակից, նա լավ է յերևում նաև լուսանկարչական թիթեղնի վրա, ուստի փոսը նույնպես պետք է քողարկել: Դրա համար փոսը պետք է ծածկել ճիւղատներով, իսկ ճիւղատները վրա լցնել, ինչ կա ձեռքի տակ՝ խոտ, ծղոտ և այլն: Սրամատում խիստ աչքի յեն ընկնում հրակնատները, հակառակորդի կողմից նրանք թափանցիկ են յերևում, լույս են արձակում: Ամենից առաջ հրակնատները պետք է նեղ շինել դեպի հառառակորդի կողմը, հետո պետք է ծածկել հաստ ու կոշտ կտորով, կամ նրանց առջևում ճիւղատներ տնկել ու վրան թափել խոտ կամ մի այլ հարմար նյութ: Յեթե հարկ է լինում փորել խրամուղի, այդ խրամուղին չպետք է հասցնել կրակային կետին, պետք է շինել վորտեղ, բայց վոչ կտրուկ (սուր) պտույտներ

րով: Սրամուղու պատվարը պետք է փոքր շինել և նույնպես քողարկել:

Արհեստական խոչընդոտներ դնելիս հարկավոր է դասավորել նրանց առուններում, սորսորներում, ցածր բուսականության մեջ այնպես, վոր նրանք լինեն յերկայնակի գնդակոծի տակ: Արհեստական խոչընդոտները պետք է ծածկել ծղոտով, և ձեռքի տակ յեղած այլ նյութերով: Լավ է հակառակորդին մուրուրության մեջ ձգել կեղծ խրամատով, այսինքն՝ մի կողմում փորել մի ուրիշ խրամատ, նույն չափերի, բայց վոչ այնքան խորը: Այդ կեղծ խրամատը նույնպես պետք է քողարկել, բայց այնպես, վոր հակառակորդը նկատի այդ խրամատը և կարծի, վոր հենց այդտեղ էլ դասավորվել է ջոկը: Բոլոր աշխատանքները պետք է կատարվեն ծածուկ, ամենից լավ է, իհարկե, գիշերով, յեթե այդ հնարավոր է: Գիշերային աշխատանքներում պետք է պահպանել լուություն, չը չխնդրեցնել թիյերով, կաթսայիկներով, բարձր չը խոսել: Գիշերով յուրաքանչյուր ձայն լավում է հեռվից: Ծիւղ նույնպես չի կարելի: Վառված ծխախոտը յերևում է մեծ տարածության վրա: Գիշերային բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն մինչև առավոտ, քողարկվեն և նյութերը հավաքվեն:

Պետք է վաղորոք գտնել ծածկված ուղիներ փամփշտակիրների ու լրատարների շարժման համար:

Յերեկով հակառակորդի սավառնակը յերևալուն պես, հարկավոր է աշխատանքներն ու նյութերը ծածկել գրասներով, կամ յերթական վրաններով: Իսկ հրացանաձիգները պետք է պառկեն սավերոտ կող-



մում, առվում և այլն: Բայց չպետք է վազվզել և այդպիսի տեղ վնասը, այլ պետք է պառկել, և սպասել թե մոտերքում կա ծածկարան, սողալով անցնել այդտեղ:

## ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ, ՅԵՐԲ ՀԱԿԱՌԱԿՈՐԿԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Ե

Յերբ հակառակորդը դեռ հեռու չէ, նրա մասին հետախուզությունից վոչ մի տեղեկություն չկա, դասակի հրամանատարը կհրամայի դիտողներին մնալ խրամատներում, իսկ մնացածներին ծածկված տեղավորվել մոտերքում: Բայց անա տեղեկություններ են ստացվել հետախուզությունից, վոր հակառակորդը հարձակվում է: Ջոկերն արագ գրավում են իրենց խրամատները և սպասում են հակառակորդի մոտենալուն: Հրաձգային ջոկը, յեթե դասավորված է առաջին գծում, կրակ է բացում միայն այն ժամանակ, յերբ հակառակորդը մոտենում է այն առարկաներին, վորոնց միջև յեղած տարածությունը չափված է: Գերագանց հրացանաձիգները, յեթե դասակի հրամանատարից ինքնուրույն չեն ստացել, շարքից հանում են հակառակորդի հրամանատարներին ու գնդացրորդներին: Յերբ հակառակորդը մոտենում է մինչև 400 մետրի վրա, սկսում է աշխատել նռնաձիգը: Պաշտպանության շրջանի առջևի յեղրից 200 մետրի վրա հակառակորդը կպատրաստվի գրոհի անցնելու: Այդ կնկատվի նրանից, վոր հակառակորդի հրետանին հանկարծ կրակը կփոխադրի մեր դասավորության խորքը, նրա ոժանդակները կշտապեն դեպի առաջավոր մասերը, հակառակորդի կողմից կրակը կուժեղա-

նա: Այդ մոմենտից ջոկի կրակը պետք է հասցնել ամենաբարձր լարվածության: Այն նպատակները, վորոնց դեմ հարկավոր է կրակել, ցույց կտա ջոկի հրամանատարը: Բայց հրացանաձիգներն իրենք էլ պետք է իրենց համար նշաններ ընտրեն, միայն թե հարկավոր է դնահատել այդ նշաններն այնպես, ինչպես այդ մասին ասված է հարձակման ժամանակ:

Յերբ հակառակորդը մոտենում է ձեռքի նռնակի նետման տարածության վրա, հրացանաձիգները նրա վրա յեն թափում նռնակները, աշխատելով նետել այնտեղ, վորտեղ կուտակվում է հակառակորդը:

Հակառակորդը ներս է խուժել ձեռքի գնդացրի խրամատը: Ձեռքի գնդացրի յետ է գնացել և կրակում է հակառակորդի դեմ մի այլ կետից: Յրդ հրաձգային ջոկի հրամանատարը տեսնում է, վոր նրա ջոկի առջևում թփուտներ յետևում հակառակորդը կուտակվում է: Հակառակորդին առանց գնդակոծի թողնել չի կարելի, բայց և ձեռքի գնդացրի խրամատում հակառակորդին հանդուրժել չի կարելի, նա սպառնում է ջոկին թեահար կրակով: Գերագանց հրացանաձիգներին ջոկի հրամանատարը հրամայում է կրակ բանալ ձեռքի գնդացրի խրամատը ներխուժած հակառակորդի դեմ, իսկ մնացած հրացանաձիգներին՝ կրակ վարել իրենց տեղամասում:

Դասակային շրջանի խորքից մյուս հրաձգային ջոկերի կատարած հակազրոհով հակառակորդը դուրս է հանված ձեռքի գնդացրի խրամատից: Նա նորից գրավել է իր կետը: Բայց անա հակառակորդը գրավեց հաստոցավոր գնդացրի խրամատը: Հակառակորդի մի մասը շրջանցում է 74,3 բարձունքը հարավից:



4-րդ և 5-րդ հրաձգային ջոկերը դեռ իրենց կարգի չեն բերել առաջին հակազբոհից հետո և գտնվում են բարձունքի յետևում ձեռքի գնդացրի մոտ: 3-րդ հրաձգային ջոկի հրամանատարը տեսնում է վոր ներխուժած հակառակորդին պետք է յետ մղել, հակառակ դեպքում ամբողջ դասակը կկտրվի թիկունքից: Յեթե հակառակորդը գրավի նրա (3-րդ ջոկի) կետը, մինչ այդ պատրաստ կլինեն 4-րդ և 5-րդ ջոկերը: Ջոկի հրամանատարը վորոշում է իր ջոկով հակազբոհի անցնել հաստոցավոր գնդացրի խրամատում գտնվող հակառակորդի դեմ: Մեր հաստոցավոր գնդացրը կըրակ է վարում հակառակորդի դեմ պահեստի կետից, 3-րդ ջոկի հակազբոհը հաջողվեց: Հակառակորդը դուրս է հանված հաստոցավոր գնդացրի խրամատից, հակառակորդի այն մասը, վոր շրջանցում էր 74, 3 բարձունքը, վոչնչացրված է 4-րդ և 5-րդ հրաձգային ջոկերի կողմից: Դրությունը կրկին վերականգնված է:

Այդպես է ջոկը գործում, յերբ հակառակորդը գրավում է մեր կրակային վորևե կետը:

Յերբ հակառակորդն այնուամենայնիվ կտիպի նահանջել, ջոկը նահանջում է դասակի հրամանատարի հրամանով: Ջոկին մատնանշվում է, թե ինչ ճանապարհով և ուր նահանջել: Սովորաբար հրաձգային ջոկերը նահանջում են դասակի հրամանատարի ոգնականի ղեկավարությամբ, վորը ջոկերի միջև հերթ է նշանակում, թե վոր ջոկը պետք է նահանջի, իսկ վորը հակառակորդի դեմ կրակ վարի: Բայց յերբ դասակի հրամանատարի ոգնականի կողմից այդպիսի ցուցումներ չկան, այդ դեպքում յուրաքանչյուր հրաձգային ջոկի հրամանատար ինքն է դատում, թե յերբ

պետք է ինքը նահանջի, յերբ կտնգնի, վորպեսզի նահանջը մաս-մաս կատարվի: Այդ դեպքում ջոկերը կանգառումների ժամանակ չպետք է դասավորվեն իրար հետ մի գծի վրա, այլ նահանջող ջոկը պետք է անցնի մի փոքր ավելի հեռու այն ջոկից, վորը նրանից առաջ էր նահանջել:

Ջոկերի ամբողջ նահանջը կատարվում է գնդացրային ջոկերի կրակի պաշտպանությամբ:

Ինքը ջոկի հրամանատարը նահանջում է վերջին հրացանաձգի հետ:



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՁՈԿԸ ՀԵՏԱԽՈՒՁՈՒԹՅՈՒՆՈՒՄ . . . . .	3—33
Ինչ է պահանջվում հետախուզությունից . . . . .	3
Ինչպես կողմորոշվել հետախուզությունում . . . . .	6
Ինչպես ջոկը պիտի շարժվի հետախուզությունում 10	
Ինչպես զննել տեղական առարկաները . . . . .	16
Ինչ պետք է անել հակառակորդին կամ տեղա- կան բնակիչներին հանդիպելիս . . . . .	21
Ինչպես հետախուզել հակառակորդի դասավո- րությունը . . . . .	25
Յերբ և ինչպես զեկուցել . . . . .	29
ՁՈԿԸ ԴԵՏԲՈՒՄ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ . . . . .	33—40
Ինչու յե հարկավոր պահպանվել յերթում . . . . .	33
Ինչպես ջոկը պիտի շարժվի դետքում . . . . .	36
Ծառայությունը դետքում . . . . .	39
ՁՈԿԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՁ . . . . .	40—58
Ինչ է ջոկի խնդիրը հարձակման մեջ . . . . .	40
Ինչպես ջոկը պետք է շարժվի հարձակման ժամանակ . . . . .	44
Ինչպես քողարկվել . . . . .	49
Յերբ և ինչպես կրակ մղել . . . . .	51
Ինչպես գրոհել հակառակորդին . . . . .	54

ՁՈԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ . . . . . 58—69

Ինչ խնդիր ունի ջոկը պաշտպանությունում և ինչպես է նա դասավորվում . . . . .	58
Ինչպես քողարկվել . . . . .	63
Ինչ պետք է անել, յերբ հակառակորդը հարձակվում է . . . . .	66





« Ազգային գրադարան



NL0227014



41. 563

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.